



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԳՐՈՆԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀԱՏՈՐ ԾԸ. Կ. ՊՈԼԻՍ, ՅՈՒՆԻՍ 24, 1905 ԹԻԻ 25

ԱՐՏՈՆԱՏԵՐ 2. Բ. ԿՐԻՆ ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ 2. Ս. ՊԱՐՆԸՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թղթակիցներու Պատասխաններ 457. — Ազքատանցի Մը Մեզ 459. — Մայրերուն 460. — Քափուրի շարտարունաը 461. — Վիքթորիա Ջովեժը Ելեկտրական Ոյժի Համար 462. — Չին կառավարիչ Մը 463. — Եգիպտական Շիրիմ Մը 463. — Գրիգոր Նարեկացի 464. — Միայն Քրիստոս 465. — Սալմաստի Աւետարանական Գործը Անցեալում Եւ Ներկայում 466. — Մարգուանէ 466. — Տրապիզանէ 467. — Իժ Դաս, Յուլիս 16 467. — Քաղաքական Լուրեր 469.

ԹՂԹԱԿԻՑՆԵՐՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

[Խմբագրական]

4. Եթէ մէկը, որ երկար ժամանակէ հետէ Բողոքական է, բայց եկեղեցիի անդամ չէ եղած, ծանր հիւանդութեամբ մը պառկի եւ խնդրէ որ հովիւը գայ եւ Հաղորդութիւն տայ իրեն, պէտք է ընդունիլ անոր խնդրոքը: Այսպիսի հարցման մը արդէն անգամ մը պատասխանած ենք: Սակայն դարձեալ կու տանք մեր կարծիքը: Շատեր այնպիսի գաղափար մը ունին թէ մահուանէ անմիջապէս առաջ առնուած Հաղորդութիւնը փրկարար ազդեցութիւն ունի եւ թէ մահամեծքը ապահովութեամբ երկինք կը մտնէ, եթէ միայն, չնչելէ դադրելէն առաջ, ընդունի հացը եւ գինին, որով Տէրօջը մահը կը յիշատակուի: Հովիւը քաջալերելու չէ այս սխալ կարծիքը: Մահամեծքին պէտքը նրկական բան չէ, ոչ իսկ Տէրօջը կտրուած մարմնին եւ թափուած արիւնին նուիրական խորհրդանշանը, այլ հաւատքով եւ ապաշխարութեամբ բուն Տէրօջը նայիլ: Սակայն եթէ հիւանդը կ'զգայ թէ այդպէս կ'ընէ ինք, եթէ իր հոգիին փրկութեան համար Քրիստոսի մահուան արժանիքին եւ Աստուծոյ անհուն սիրոյն կ'ապաւինի, եւ ոչ թէ ունէ արարողութեան կամ խորհրդի, եւ ապայն կ'զգայ թէ իր Տէրը երես առ երես տեսնելէ առաջ կը վայել

որ իբ ոէրը եւ երախտագիտութիւնը յայտնէ՝ միանգամ հնազանդելով «Ասիկա ըրէք զիս յիշուու համար» պատուէրին, այն ատեն լաւ է ընդունիլ անոր խնդրոքը: Այդպիսի պարագաներու մէջ հովուին համար լաւագոյն ընթացքը պիտի ըլլայ սարկաւազ մը եւ թերեւս եկեղեցւոյ ուրիշ մէկ երկու անգամ առնել, մարդը եկեղեցիի անդամ ընել եւ ապա անոր եւ միւսներուն մատակարարել Հաղորդութիւնը: Մենք ճիշտ այսպէս ըրինք երբ անհովիւ եկեղեցիի մը կ'ապաստուորէինք Ամերիկայի մէջ:

Մեր թղթակիցը կը հարցնէ թէ հովուին ինչ ընելու է, եթէ այդ խնդրոքն ընողը Բողոքական չէ, այլ այնպիսի մէկը՝ որ երբեմն երբեմն եկած է Բողոք. եկեղեցին: Եթէ մարդը շատ մահամեծք չէ, մեր կարծիքով հովուին լաւագոյն ընթացքը պիտի ըլլայ մարդն այցելել, զայն Քրիստոսի առաջնորդել, յորդորել որ միայն Քրիստոսի ապաւինի իր հոգիին փրկութեան համար, եւ աղօթել մարդուն համար: Եթէ մարդը տակաւին կ'զգայ թէ պէտք է որ Հաղորդութիւն ընդունի, հովիւը կըրնայ զայն խրատել որ իր եկեղեցիէն քահանայ մը կանչէ:

5. Կը հարցուի թէ հոգին, մարմնի նման, ծնողներէ՞ կը ժառանգուի թէ ուղղակի Աստուծմէ կ'ստեղծուի: Ոչ ոք կրնայ ըսել թէ ստուգապէս գիտէ այս հարցման պատասխանը: Կրնանք կարծիքներ միայն ունենալ: Մեր անձնական կարծիքը օտ է թէ հոգին կը ժառանգուի: Ասով այն ոչ նուազ կ'ըլլայ գործ Աստուծոյ: Խնդիրը կը դառնայ միայն կերպին վրայ, որով Աստուած մեր հոգիները ստեղծեց: Այսինքն ուղղակի՝ թէ անուղղակի կերպով ստեղծեց զանոնք: Ահաւասիկ մեր պատճառները մեր կարծիքին համար. (1) Ուշագրաւ նմանութիւնը որ յաճախ կը տեսնուի ծնողի եւ մանկան մտային ու բարոյական առանձնայատուկութիւններուն միջեւ: (2) Այս հայեացքը լաւագոյնս կը բացատրէ մեղանշական բնութեան մը ժառանգումը: Մեղքը մարմնին մէջ չէ, այլ հոգիին մէջ: Եթէ Աստուած ուղղակի կ'ստեղծէ իւրաքանչիւր հոգի, իրեն նման սուրբ պիտի ըլլայ հոգին: Իսկ, եթէ հոգին մեղսալից ծնողներէ կը ժառանգուի, ան կը ժառանգէ անոնց ինկած բնութիւնը: Եւ չթուիր թէ ամէն հոգիներ առանց բացառութեան մեղքի մէջ պիտի իյնային, եթէ ամէնքը առանց մեղանշելու հակուսի ստեղծուէին: Կամ, եթէ այդ իրենց միջավայրին անհրաժեշտ արդիւնքն ըլլայ, դժուար է հաւատալ թէ Աստուած բարի այնքան հոգիներ այնպիսի դիրքի մը մէջ պիտի դնէր, ուր անոնք անշուշտ պիտի մեղանշէին:

6. Թղթակից մը կը հարցնէ Բողոք. Եկեղեցւոյ կարգը. Կաթոլիկ Եկեղեցին, կ'ըսէ, իր կարգը Պետրոս առաքեալէն կ'առնէ, եւ Լուս. Եկեղեցին՝ Թաղէոս եւ Բարթոլոմէոս առաքեալներէն: Առանց կարգի եւ կարգաւորի՝ եկեղեցի կրնայ ըլլալ, եւ Բողոք. Եկեղեցիին կարգը Լուսերէ՞ կ'առնուի: Այս հարցման պատասխան գտնելու համար նայինք թէ ինչ բան ճշմարիտ եկեղեցի մը կը կազմէ: Ճշմարիտ եկեղեցին այնպիսիներէ կը բաղկանայ որոնք Տէր Յիսուս Քրիստոսի կը հաւատան իրենց հոգիներուն փրկութեան համար, եւ որոնք կը օրինակ զՔրիստոս եւ իրենց կեանքին նպատակ կ'ընտրեն անոր ծառայել: Եկեղեցիի անդամներուն օգնելու համար իր ամենիմաստուն Գլուխը սրբազան խորհուրդներ հաստատած է եւ հոգեւոր պաշտօնեաներ առւած է եկեղեցիին: Սակայն այդ խորհուրդները եւ պաշտօնեաները ունենալով չէ որ Քրիստոնեաներու սեւէ խումբ՝ ճշմարիտ եկեղեցի կ'ըլլայ, այլ՝ հաւատք, սէր եւ նուիրում ունենալով: Չենք ըսեր թէ խորհուրդները եւ եկեղեցականները կարեւորութիւն չունին: Ամէն եկեղեցի պարտի նուիրական խորհուրդները կատարել, եւ

բաղձալի է որ ամէն եկեղեցի իր հովիւն ունենայ: Բայց ասոնք չէ որ ճշմարիտ եկեղեցի կը կազմեն: Եւ չենք կարծեր որ եկեղեցական մը սեւէ մասնաւոր շնորհք կ'ընդունի օտ պատճառով որ իր ձեռնադրութիւնը անխափան կարգով առաքեալ մը կու գայ: Ենթադրենք թէ Կեղոնական Ափրիկէի կամ մեկուսացեալ կղզիի մը մէջ բնակող մարդոց ցեղ մը կերպով մը իմանայ Աւետարանին ճշմարտութիւնը եւ ընդունի սրտով: Ուրիշ Քրիստոնեաներու հետ յարաբերութիւն չունենայ եւ չգիտնայ թէ ուրիշ Քրիստոնեաներ կան: Նոր Կտակարանէն զազափար մը առնէ եկեղեցիին կազմակերպութեան վրայ եւ ժողովուելով կարողութեան ու եռանդուն հոգեւորութեան կողմէ ամենայարմար անձ մը ընտրէ եւ աղօթքով զատէ հովուական պաշտօնի համար: Մեր անօթեալ մը այսպիսին նոյնքան ճշմարտապէս հովիւ կ'ըլլայ որքան եթէ Քրիստոնեայ աշխարհի բոլոր եպիսկոպոսները ձեռք դնէին անոր գլխուն վրայ: Մենք ձեռնադրութեան պաշտամունքի կարեւորութիւն կու տանք: Կը յարգենք մարդոց այն դասակարգը, որ այն պաշտամունքով մասնաւորապէս պաշտօնէութեան գործին կը յատկացուի: Այս՝ արժանապատուութիւն կ'ընծայէ պաշտօնին: Բայց զազափարը թէ ձեռնադրութեան արարողութիւնը արժանաւորութիւն կու տայ ենթակային՝ չենք կարծեր թէ ճշմարտութեան նշոյլ մը կը պարունակէ, այլ՝ ուրիշ օրինակ մ'է լոկ արտաքին բաներու չափէն աւելի կարեւորութիւն ընծայելու, որ չարի արդիւնաւոր պատճառ մը եղած է Եկեղեցիին մէջ:

Մենք անձամբ հինգ փարա չենք տար գիտնալու համար թէ անոնք որ իրենց ձեռքերը մեր գլխուն վրայ դրին մեր ձեռնադրութեան ժամանակ՝ ճառագեական յաջորդութեան գծէն էին թէ ոչ: Մեզի համար կը բաւէ գիտնալ թէ անոնք բարձր մարդիկ էին, եկեղեցիներուն մէջ յոյժ շատ գնահատուած: Սակայն մեր թղթակցին պէս զգացողներուն կարելի է յիշեցնել թէ Ժ. Զ. դարուն սկիզբները ոչ միայն Լուսեր եւ Մելանկտոն, այլ եւ բազմաթիւ եկեղեցականներ ընդունեցան կրօնական բարեկարգութեան սկզբունքները, եւ Բողոք. ձեռնադրութիւնը անոնցմէ մեզի եկաւ: Եթէ ասոնք իրենց Սբ. Գիրքերուն հաւատարիմ հետեւող էին եւ հաւատարմութեամբ իրենց Աստուածային Տէրոջ կը ծառայէին, զանոնք իրենց եկեղեցական պաշտօնէն զրկող ոչ մէկ վճիռ սեւէ յարգ պիտի ունենար Անոր քով, ոչ ալ ունենալու է մեր քով:

7. Նոյն թղթակիցը կը հարցնէ, ՎՄԿրտուութիւնն

ինչ նշանակութիւն ունի : Մեղքերու թողութիւն կապահովէ : Եթէ ոչ՝ ինչ բացատրութիւն կու տաք Գոր. Բ. 37-40 համարներուն : Մկրտութիւնը աղայոց մատակարարուելով կը նշանակէ (1) թէ ծնողը կը նուիրէ մանուկը Տէրոջ, ճանչնալով թէ իր պարտականութիւնն է զայն մեծցնել «Տէրոջը վարժութիւնովը ու խրատովը» (2) Արտաքին նշանն է ուխտին, որով Եհովան կը խոստանայ Աստուածն ըլլալ հաւատացեալին եւ անոր սերունդին : Երբ չափահասի կը մատակարարուի, նշանակ է ներքին մկրտութեան Հոգւով Սրբով, զոր կը հաւատայ թէ ընդունած է, նաեւ է տեսանելի միջոց մը ինքզինք Աստուծոյ ժողովրդին հետ միացնելու : Մկրտութիւնը փրկարար չէ, եթէ զղջման եւ Քրիստոսի վրայ հաստատուած հաւատքի հետ խառն չըլլայ : Այս յայտնի է այն համարներէն, որոնց մէջ զղջում եւ հաւատք կը յիշուին իբրեւ հոգեւոր փրկութեան պայմաններ : Պենտեկոստէի օրը մկրտութիւն ընդունելու եւ այնպէս հրապարակաւ Քրիստոսի ժողովրդին հետ նոյնապաշտ որոշումն էր որ շատերու դարձը հաստատեց եւ զանոնք Քրիստոսի հետ փրկարար յարաբերութեան մէջ դրաւ :

Տ. Էրզրումի փոքրիկ գիւղէ մը երեք նամակ առած ենք, որոնցմով կը հարցուի թէ արտօնացեալ քարոզիչներու ինչո՞ւ այժմ արգելուած է մարդ ամուսնացնել, մինչ Բողոք. գիւղերու մէջ ժամանակաւ թոյլ կը տրուէր այդ : Միտիտնարը տարին մէկ անգամ կ'այցելէ գիւղը, եւ մօտերը Բողոք. ուրիշ եկեղեցական մը չկայ օր կանչուի : Հետեւանք օտ կ'ըլլայ օր ամուսնանալ ուղող երիտասարդներ կ'ատիպուին Լուս. Եկեղեցւոյ քահանայի մը դիմել, եւ այս բնականապէս կը տկարացնէ անոնց սէրը բուն իրենց եկեղեցիին վրայ :

Մենք խորապէս կը համակրինք այս գիւղացի եղբայրներուն եւ կը կարծենք թէ իրենց այս խընդիրը լուրջ խնդիր է : Բան մը ընելու չենք, որով տկարանայ ամուսնութեան յարաբերութեան կարեւորութեան ու նուիրականութեան տպաւորութիւնը : Անխորհրդարար ամուսնանալ, հոգ չընել թէ ո՞վ պիտի ըլլայ մեր կենակիցը, ընտրութիւնը բոլորովին ուրիշներու թողուլ եւ կամ ցուցնել թէ ուե՛ է ոք կարող է ամուսնութեան արարողութիւնը կատարել, ո՞վ ալ ըլլայ այն, այդ տպաւորութիւնը տկարացնող բաներ են : Բաղձալի է օր, որչափ կարելի է, արարողութիւնը կատարուի այնպիսիներու ձեռամբ, որոնք յատկապէս նուիրուած են պաշտօնէութեան գործին : Այս է մայրաքաղաքիս շրջականները եւ մեր Բողոք. ժողո-

վուրդներէն մեծագոյն մասին մէջ գործադրուած կանոնը : Շատ ալ անպատեհութիւն չպատճառեր, վասն զի ձեռնադրեալ եկեղեցականներ կան այնչափ մօտ օր կրնան կանչուիլ : Բայց էրզրումի Գէմախ գաւառակին եկղցկն. կացութիւնը բացատիկ է : Եւ մեր կարծիքով բացատիկ տնօրինութիւն մը ըլլալու է անոր համար : Գէմախ այնչափ հեռի է Խարբերդէ որ գործնականապէս կապակցութիւն մը չունի Խարբերդու Եկղցկն. Միութեան հետ : Մեկուսացեալ գաւառ է : Ուստի կը կարծենք թէ պէտք է օր կամ միտիտնարը տարին չորս անգամ այցելէ հոն, կամ ընդիկ ձեռնադրեալ հովուի մը կամ աւետարանչի մը կողմէ այցելութիւն ըլլայ հոն — եւ աւելի ձեռնադրեալներ գտնուելու են այդ դաշտին մէջ — կամ թէ քարոզիչն ի մասնաւորի արածուելու է միտիտնարի կամ ընդիկ հովուի մը փոխանորդել երբեմն : Ամէնքը մեզի համակարծիք պիտի չըլլան այս մասին : Գիտենք թէ ասոր դէմ առարկութիւններ կան, բայց մեր տեսութեամբ աւելի զօրաւոր են այն առարկութիւնները, որոնք մարդը կ'ստիպեն օր իր եկեղեցիէն դուրս եկեղեցական մը փնտռէ զինք ամուսնացնելու համար :

Ա. Ղ. ՔԱՏԱՆՈՅԻ ՄԸ ՄԵՋ

Օր մը աղջիկ մը քաղաքի աղքատանոց մը կ'այցելէր : Քանի մը կարմիր շահողբամներ (գարանֆիլ) տարաւ, եւ մինչ կ'անցնէր շէնքին սրահներէն, զանոնք հիւանդներուն բաժնեց : Պատասպարեալներէն ոմանք անտարբերութեամբ ընդունեցին զանոնք, աղջկան նայելով իրենց տժգոյն եւ տխուր երեւոյնքով : Բայց շատեր ընդունեցին զանոնք սիրոյ եւ դեղեցկութեան ծարաւն ունեցող հոգիներու ջերմաջերմ փափաքով : Երբ աղջիկը կ'անցնէր վերջին սրահէն, իր առաջնորդին դարձաւ յուսահատական շարժումով մը : «Ո՛հ, ասոնք ինչպէս կը դիմանան,» աղաղակեց : «Ըսել չեմ ուղեր անոնց համար որոնք ասկէ աղէկ վիճակ վայելած չեն երբեք, բայց միւսներուն համար որոնք լաւագոյն վիճակ ունեցած են : Եթէ դէթ բանի մը յոյսը ունեցած ըլլային, հոգ չէր այնչափ : Բայց ասիկա իրենց մնացած վիճակն է : Ինչո՞ւ մարդիկ ապրելու են ամէն բան կորսնցնելէ ետքը, երբ իրենք ուրիշ բան չեն բայց միայն բեռ իրենց եւ ուրիշներու :»

Օր մը աղքատանոց բերուեցաւ կին մը, որ առաջ վայելած էր տուեն, սէր եւ գործի հաճոյք, եւ կեանքը երջանիկ ընող բաներ, սակայն ասոնց ամէնէն զրկուած՝ հանրային դժուրութեան

առարկայ եղաւ իր ծերութեան հասակին մէջ: Ի սկզբան, կինը շատ սրտաբեկեցաւ, եւ տեսնողները իրարու կ'ըսէին թէ անիկա շատ պիտի չապրի: Բայց կինը ունէր ստացուած մը որու չէր կրնար դպչիլ վիճակի ունէ փոփոխութիւն, այն էր անոր Քրիստոնէական հաւատքը: Երբ կնոջ վշտին սաստկութեան առաջին տպաւորութիւնը անցաւ, անիկա սկսաւ իր շուրջ նայիլ եւ գործ փնտռել: Մարդկային տեսակէտէ նայելով, գործ գտնելու աւելի անյոյս տեղ մը գրեթէ չէր կրնար երեւակայուիլ, բայց կինը պիտի չվհատէր: Խնդրեց եւ արածնութիւն ընդունեց Աստուածաշնչի դաս մը նայիլ կիրակի կէսօրներէն ետքը: Ասիկա պատահեցաւ տարիներ առաջ: Կինը այսօր տակաւին ողջ է, եւ քսան անձերէ բաղկացած իր կարգը ամէն կիրակի կէսօրէն ետքը կը ժողովուի: Եւ այդ դասէն բաւական հոգիներ սորվեցան ճամբան այն նոյն հաւատքին որ անոր սորվեցուց յաջողութեան վերածել աշխարհիս ճախողութիւն կոչած մէկ բանը:

ՄԱՅՐԵՐՈՒՆ
(Մէնիս Ծառ, Թալաս)
1.

Կրօնական եւ քրիստոնէական բնույթ ունեւորող մէջ
Կ'ըսուի թէ հարիւրաւոր տարի պէտք է աշխարհի բոլոր գիրքերուն լոկ անունները կարդալու համար: Եթէ մէկը ամբողջ տարի մը նստի եւ առանց ուրիշ գործ ընելու կարդայ մէկ տարուան մէջ հրատարակուող Ամերիկեան գիրքերը, անոնց փոքր մէկ մասը միայն պիտի կրնայ կարդալ: Սակայն եթէ Պորտի Կ. պոլսոյ գրատան ցանկին նայինք, զպրոցական եւ Հայերէն գիրքերէ զատ միայն 92 Հայատառ Թրքերէն եւ 24 Յունատառ Թրքերէն գիրք կը գտնենք Թուրքիոյ մեծ պետութեան բոլոր Բողոքականներուն համար(*): Ինչո՞ւ արդեօք այսքան քիչ են գիրքերը: Շուկային մէջ ամէնէն շուտ գոցուող խանութն այն է, որու յաճախողները ամէնէն աւելի քիչ են: Նմանապէս կը կարծեմ թէ գիրքերուն սակաւութեան պատճառը մասամբ յաճախողներուն օակաւութիւնն է: Ո՛րչափ կիներ կան որոնք տակաւին շատ քիչ կ'զգան ընթերցման յարգը: Եւրոպայի եւ Ամերիկայի մէջ խղճամիտ շատ ծնողներ իրենց տղայոց համար գիրք կ'առնեն: Փոքրիկ գիւղաքաղաքներու մէջ ալ շատ կիներ գիրք կը գնեն եւ իրարու փոխ կու տան: Իսկ մեծ քաղաքներու

(* Յօդուածներու այս շարքը Թրքերէն Աւստրալիոյ համար պատրաստուած էր նախապէս:

մէջ գրատուններ կան հազարաւոր գիրք պարունակող, եւ ամէն ոք կրնայ անոնցմէ գիրք առնել միայն վերադարձնելու պայմանով: Մեծահարուստ մարդ մը ձեռնարկած է իր հարստութեան մեծ մասը գործածել Ամերիկայի ամէն կողմը գրատուններ հիմնելու համար:

Այոչափ եռանդի պատճառն է, կը կարծեմ, յաճախողներուն եւ ընթերցասէրներուն շատութիւնը: Երանի թէ, մայրեր, դուք ալ ընթերցասէր ըլլայիք: Առաջին գիրքը գոր կ'ուզեմ այսօր ձեզի յանձնարարել՝ Սուրբ Գիրքն է, գիրքերուն Գիրքը: Անցեալները կաղ, աղքատ կնոջ մը այցելութիւն տուի: Ո՛ւր է Սուրբ Գիրքդ, ըսի: Ան միջապէս գիտցաւ տեղը, եւ գիրքը ցուցուած տեղն էր: Ձեռքս առի դայն, շատ մաքուր պանուած էր եւ թուխ թղթի մը մէջ ծրարուած: Ով մայրեր, արդեօք դուք ալ գիտէք ձեր Սուրբ Գիրքին տեղը: Ո՛ւր է այն եւ ի՞նչ վիճակի մէջ: Կը կարծեմ թէ ձեր Սուրբ Գիրքին վիճակէն կրնամ գիտնալ թէ դուք ի՞նչպիսի Քրիստոնէականներ էք: Ձեզմէ քանի հօգի ամէն օր կը մտածեն անոր վրայ: Սուրբ Գիրքը թանկագին քարէ եւ հարազատ սակիէ աւելի ցանկալի է: Եթէ աշխարհային ունէ զուարճութիւն եւ զբաղում անոր ընթերցումէն նախապատիւ կը համարիք, ի՞նչ տարբերութիւն կ'ունենանք Ամերիկայի այն հին վայրենիներէն, որոնք Սպանիացիներու համրիչներէն եւ նկարէն կերպառներէն շատ ախորժելով իրենց ամէնէն թանկագին քարերը եւ հարազատ սակիները կու տային անոնց փոխարէն: Վասն զի համրիչի զնդակները ոսկիի հետ բաղդատմամբ ի՞նչ արժէք որ ունին, աշխարհային զուարճութիւններն ալ Սուրբ Գրքի հետ բաղդատմամբ նոյն արժէքը ունին:

Հաւանօրէն ձեզմէ ոմանք կ'ըսեն, «Սուրբ Գիրքը կը կարդամ, բայց օգուտ մը չեմ քաղեր»: Միթէ կարո՞ղ էք մութի մէջ կարդալ: Կոյրերը իրենց մատներով կը կարդան, բայց կոյր միտքերը չեն կրնար: Եթէ կարդան իսկ, չեն հասկնար: Արդ, ազօթէ Սուրբ Հոգիին համար: Ան լոյս կու տայ: Այն ատեն ամէն մէկ էջ աղամանգազարդ ոսկիի պէս կը փայլի: Օրական ընթերցմանդ մէջ այնպիսի համար մը գտիր որ այն օրը աւելի ազդեկ կին մը ըլլալուդ օգնէ: Սուրբ Գիրքը մեր ցուպը եւ զաւազանն է: Կրնաս ըսել թէ ոտքերուս ճրագ եւ շաւիղներուս լոյս է (Սաղ. ՃԺԹ. 105): Ով մայրեր, դուք ձեր զաւակներուն Սուրբ Գիրքը կը կարդա՞ք երբեք, եւ կամ, եթէ անոնք ընթերցուածը չեն հասկնար, պատմութիւն կը պատմէք: Կը վախնամ թէ շատերդ չէք ընել:

վասն զի դպրոց զրկած ձեր աղջիկները կը ցուցը-
նեն թէ ըստ արժանւոյն չէք կրթած զանոնք :
Եթէ դուք սեղան նստիք եւ ուտէք, մինչ ձեր
աղջիկները անօթի են եւ ուտելու բան մը չու-
նին, ինչ պիտի ըսեմ ձեզի նկատմամբ : Եւ եթէ
հոգեւոր այս կերակուրէն անոնց չտաք եւ զանոնք
Սուրբ Գիրքով չկշտացնէք, ինչ պիտի չըսեմ ձեզի
նկատմամբ : Հոս կին մը կը ճանչնամ, որ իր ձեռ-
քով թղթէ ուղտ եւ ուրիշ խաղալիկներ կը շինէ
իր զաւակներուն համար եւ Սուրբ Գիրքով կը
կրթէ զանոնք : Ամէն կիրակի ես ամէնէն կարե-
ւոր եւ եկեղեցի երթալէն իսկ կարեւոր գործ
կը համարիմ Սուրբ Գրոց պատմութիւններ ընել
զաւակներու : Դուք կիրակի օրերը ժամանակ
չունիք այսպիսի բանի համար : Եթէ կ'ուզէք որ
ձեր զաւակները ձեզ սիրեն եւ իբրեւ Քրիս-
տոնեայ զարգանան ու յառաջդիմեն, անոնց ան-
վրէպ պատմութիւն պատմեցէք կիրակի օրերը : Հոգ
չէ որ անոնք կիրակնօրեայ դպրոց կ'երթան, կը
յանձնարարեմ որ անպատճառ Սուրբ Գիրքէն
պատմութիւն պատմէք անոնց :

Ուրիշ գիրք մը զոր կ'ուզեմ յանձնարարել՝ Եր-
զարանն է : Թէեւ շատ աժան է երգարանը, մանչ
եւ աղջիկ զաւակներդ մէյմէկ օրինակ չունին
զարձեալ : Ասկէ զատ կը յանձնարարեմ Աւետարան
թերթը : Կը յիշեմ թէ մարդ մը ինչ ըսաւ ասոր
նկատմամբ : Աւելի կ'ընտրեմ առանց հացի մնալ
քան առանց Աւետարանի : Այսպէս ըսողը զա-
տարակուած չըլլալէն զատ շատ խուլ էր : Սա-
կայն կրնար ամէն նիւթի վրայ խօսել եւ անոր
հետ խօսակցողը չէր կրնար գօլէճի չըջանաւարտ
չկարծել զայն : Ինչո՞ւ այսքան ուսեալ էր այդ մար-
դը : Անոր համար որ տարիներէ ի վեր ամէն շաբ-
թու մեծ ուշադրութեամբ կը կարդար Աւետարանը եւ
ամբողջ ընտանիքին հետ անով սնած էր : Հոս Աւե-
տարան 18 անձ կայ : Ձեր գիւղին կամ քա-
ղաքին մէջ քանի՞ անձ կայ եւ քանի՞րդ տան մէջ
գիրք կը գտնուի : Հոս տուներ այցելելու պահուն
չատ անգամ կը տեսնեմ գեղեցիկ լամբարներ, զար-
դեր ու զարդարանքներ : Սակայն գիրք քիչ ան-
գամ կը տեսնեմ : Ասոնք երբեմն զարանը կամ
անտուկը դրուած կ'ըլլան եւ կամ բնաւ չեն զտ-
նուիր : Անցեալները այցելութեան մը ատեն կնոջ
մը հարցուցի թէ գիրք չունին : Պատասխանեց
թէ «ամուսինը քանի մը գիրք ունի, սակայն ինք
չգիտեր թէ ինչ են անոնք :» Կիսը լաւ գիտեր
տնական զարդերը, կահերը եւ անոնց թիւը, բայց
գիրքերուն վրայ բնաւ տեղեկութիւն չունէր :
Շատ անգամ կը գանգատիք թէ ձեր զաւակները

փողոցը կը խաղան, չար ընկերներու կը յարմա-
րին, կը հայհոյեն եւ սուտ երգում կ'ընեն, եւն.
եւ կ'ըսէք թէ չէք գիտեր ինչ ընէք : Եթէ
ձեր տունը անհրապոյր է, աղաքն անշուշտ փո-
ղոցը նախապատիւ պիտի համարին : Տունը հրա-
պուրիչ ընելու մէկ կերպն է աղաքը Սուրբ Գիր-
քով հրահանգել :

Անոնց մէյմէկ Սուրբ Գիրք տուր իրենց յա-
տուկ, Աւետարան եւ գիրք առ : Կա լաւագոյն
գարմաններէն մին : Ինչպէս ամէնէն պատուական
գեղը եւ ձկան իւղը կ'առնէք անոնց զարմանման
համար, նոյնպէս ամէնէն ապահով միջոցները գոր-
ծածեցէք անոնց կրթութեան համար : Ուրիշ դար-
ման եւս : Մի ըսէք թէ դրամ չունիք, Կրնաք եր-
բեմն տասնոց մը նետել մէկ կողմ : Թերեւս քիչ
մը շատ երեւի այս ձեզի : Սակայն անոր հարե-
րապատիկ օգուտը պիտի տեսնէք : Ահա Սուրբ
Գրոց պատուէրը : «Առատուանց քու սերմը ցանէ,
եւ իրիկունը քու ձեռքդ պարապ մի թողուր, վասն
զի չես գիտեր թէ որ օգտակար պիտի ըլլայ, աս
թէ ան, կամ թէ երկուքը հաւասարապէս աղէկ
պիտի ըլլան :»

ՔԱՓՈՒՐԻ ԶԱՐՏԱՐՈՒԵՍԱԸ

Ռուսեւեւափոնական պատերազմին մեծ հետե-
ւանքներէն մին է քափուրին (քեաֆիրի) սակաւա-
գիւտ ըլլալը եւ հետեւապէս գնոյն բարձրանալը :
Սոյն մեծարժէք խէժը ռազմանիւթի կարեւոր
տարրերէն մին կը կազմէ : Անորոշ տեւողութեամբ
պատերազմի մը միջոցին ձափոն, քափուրին իրեն
բաւական ըլլալուն վտանգ ըլլալու նպատակաւ,
արգելած է արտածումը ոչ միայն գտուած քա-
փուրին այլ նաեւ անոր անգուտին : Ֆորմոզայէ
հանուած քափուրը ձափոնէ արտադրուածին հետ
մէկտեղ աշխարհիս քափուրին մեծ մասը կը կազ-
մէ : Քափուրի անտառներուն գերընտիրները կը
գտնուին վայրի հողերու վրայ : Անգղիերէն թեր-
թի մը մէկ թղթակիցը հետեւեալ կերպով կը նկա-
րագրէ իր քափուրի անտառի մը այցելութիւնն
ի Ֆորմոզա :

Ջառիվեր եւ սահուն լեռ մը մազլելէ ետքը ե-
կանք խոշոր քափուրի ծառի մը քով, որ ինկած
պատկած էր մեր ճամբուն վրայ : Ծառը իբր չորս
սուք տրամագիծ ունէր եւ երկայնքովը սղոցուած եւ
երկու կտորի բաժնուած էր : Երկու հոգի կը զբա-
ղէին տեսակ մը ուրագով իբր վեց մատ երկար
եւ մարդու ծկոյթ մատի թանձրութեամբ տաշեղ-
ներ հանելու : Ամբողջ օրը լեցուած էր քափուրի
զորաւոր հոտով : Քիչ մը հեռուն վերը բլրին վրայ

նոյն իսկ թորանոցները գացինք, լեռնային հոսանքի մը քով ամենահարուստ բանջարանոցներու մէջ:

Փայտէն քափուր հանելու գործողութիւնը պարզ է եւ առանց մեծ ծախքի: Տաշեղները երկաթ թորանոցի մէջ կը դրուին եւ կը տաքցուին մեղմ կրակով: Բափուրի շոգին, որ կ'արձակուի տաշեղներէն, պամպու խողովակով կ'անցնի ցրտացուցիչ արկղի մը մէջ, ուր կը խտանայ ձեան նման բիւրեղներու ձեւով: Ցրտացուցիչ արկղը մասամբ կը մոցուի վազուէն ջուրի հոսանքի մը մէջ: Տաշեղները կը նորոգուին քսանըջօրս ժամը անգամ մը: Եւ իբր ութ օրն անգամ մը կրակը կը մարուի եւ բիւրեղները կը քերուին կը հանուին բիւրեղացման արկղին կուշտերէն եւ յատակէն: Այնուհետեւ անզուտ քափուրը կը դրուի խոշոր խողովակի մը մէջ եւ այնպէս կը թողուի որ տակը իջնայ: Կարճ միջոց մը յետոյ քափուրի իւղը, որ դեղնօրակ գոյն մը ունի, կը հաւաքուի խողովակին յատակը եւ դուրս կը հանուի: Իսկ քափուրը, որ թաց է եւ տակաւին մաս մը իւղ կը պարունակէ, պարկերու մէջ կը ծրարուի եւ բեռնակիրներով կը փոխադրուի յարմար կեդրոն մը, եւ անկէ՝ Թայփէյի գտարանը:

ՎԻՔԹՈՐԻԱ ԱՐՎԷՃԻԸ ԵԼԵԿՏՐՈՎԱՆ ՈՅԺԻ ՀԱՄԱՐ
(«ԱՍԵՆԻՆՅԷՒ ԱՎԵՐԷՆՆԻ ԱՆԳՂԵՍՅԷ ՈՂԵՒԿԵՆ»)

Ափրիկեան ցամաքը ճարտարագիտական հսկայ շատ ձեռնարկներու տեսարանն եղած է նոյն իսկ շատ հին ժամանակներէ հետէ: Մօտ տարիներու միջոցին նշանաւոր շատ գործեր կատարուած են այդ ընդարձակ երկրին մէջ, ուր նշանաւոր կը հանդիսանան Նեղոսի ոռոգման շինութիւնները: Այսօր ամենայնիւ այժմ ուրիշ պանծալի ծրագրի մը գործադրութեան պիտի ձեռնարկուի, այն է՝ Չամպէզի գետին վրայ Վիքթորիա ջրվէժը գործածել իբրեւ աղբիւր ելեկտրական ոյժի որ, երբ ի կատար հանուի, պիտի ըլլայ օրուան ճարտարագիտական մեծագոյն կոթողներէն մին: Վիքթորիա ջրվէժը աշխարհիս ութերորդ հրաշալիքը կոչուած է, եւ ստուգիւ ոչ յանիրաւի: Լիվինկոթըն զանիկա տեսնող առաջին սպիտակամորթն եղաւ 1854ին, եւ կը պատմէ տպաւորութիւնը զոր անիկա գործեց իր մտքին վրայ: Յիշեալ օւղեւորը ջրվէժին հասնելէ երկար ժամանակ առաջ լսած էր պարզամիտ բնիկներուն ահուդողով նկարագրելը «այն ձայն հանող ձուխը» Այս էր բոլոր տեղեկութիւնը զոր կարող եղած էր ընդունել անոր նկատմամբ, եւ ինքն իսկ պատշաճօրէն զայն նկա-

րագրելու մեծ դժուարութիւն գգաց, կարի յոյժ ազդուեցաւ անոր հսկայական վսեմութենէն, վասն զի անիկա կը ներկայանայ մին Բնութեան ամենանշանաւոր երեւոյթներէն որ ցարդ գտնուած են:

Դժուար է թէ՛ նկարագրել Վիքթորիա ջրվէժին մասնաւոր կազմութիւնը, թէ՛ ընդարձակ գաղափար մը տալ անոր սոսկավիթխար համեմատութիւններուն վրայ, բայց կրնայ քաղուիլ գաղափար մը զանիկա Նիակարայի ջրվէժին հետ բաղդատութեան դնելով: Այս վերջինը իբր երեք քստորդ մղոն լայնք ունի եւ 158-167 ոտք բարձրութիւն: Եւ սակայն Վիքթորիա ջրվէժին ամբողջ լայնքն է իբր մէկ մղոն, եւ գահավիժող ջուրին բարձրութիւնը՝ 400-420 ոտք: Ջրվէժը օւրիշ բան չէ, բայց եթէ ահագին ձեղքուած մը գետին մակերեսին մէջ: Կետեւանք հրաբխային գործողութեան: Այս անդունդը իբր 225 ոտք լայնք ունի: Չամպէզի իր աժողջ մէկ մղոն լայնքով որոտընդօստ կը գահավիժի այս նեղ կիրճին մէջ: Ճեղքուածքին հանդիպակաց պատը այնպէս զտոյ վեր եւ այնպէս բարձր է ինչպէս ժայռի այն մասը որմէ ջուրը կ'իջնէ: Անդունդին մէջ ջուրը կ'եռայ կը փրփրի իբրեւ հսկայ կաթնայի մը մէջ: Ունի մէկ ելք միայն, որ է նեղ ձեղքուած մը հանդիպակաց պատին վրայ կեդրոնին քովերը: Այս բացուածքը իբր 300 ոտք լայնք ունի, եւ այս նեղ ճամբուն մէջէն ջուրը մէկ մղոն լայնք ունեցող ժայռի մը վրայէն հոսելէ ետքը կ'ամփոփուի, կը նեղնայ: Գետին ընթացքը, ջրվէժին վրայէն թափուելէ ետքը, նոյն իսկ ջրվէժէն նուազ տարօրինակ չէ: վասն զի անիկա միայն 150 ոտք լայնք ունեցող նեղ կիրճի մը մէջէն կը վազէ 45 մղոն հեռուորութեամբ տեղ: Նիակարայի կիրճը կ'երկարի վեց մղոն միայն: Այս կիրճին մէջ գետին մակերեսը 400 ոտք ցած է ցամաքին մակերեսէն որուն մէջէն կը վազէ անիկա, եւ այս հեղեղատին պատերը գահավէժ են: Անկարելի է գետին հասնիլ վերի դաշտագետնէն, ցից ժայռերուն օւղղաբերձ բնութեան պատճառաւ, բայց չորս տեղերէ, զորոնք «գուռ» կը կոչեն բնիկները: Թէ այս կիրճին մէջի գետին ջուրին խորութիւնը ինչ է, երբեք ստուգուած չէ տակաւին, բայց ահագին ըլլալու է: վասն զի գետը հանդարտ կը վազէ բաղդատապէս, եւ միայն ցցուած ժայռերուն շուրջը կ'ալէկոծի: Այս գետը խուզարկուած է մէկ սպիտակամորթ մարդէ միայն: Ժայռի լեզուին վրայ թափուող ջուրի ոյժին նկատմամբ հաշիւ մը կրնայ ըլլալ սա իրողութիւնն ի նկատ առնելով թէ անոր փըրփուրին եւ շոգիին սիւնը կրնայ տեսնուիլ, մինչեւ

իսկ երբ ջուրը բաղդատապէս քիչ է եւ ցած, հինգ վեց մղոն հեռաւորութեանէ, Երբ գետին ջուրը իր առատ եւ յորդ վիճակին մէջ է, անոր փեր- փուրը այնքան բարձր կ'ելլէ որ տասը մղոն հե- րեւանց կը տեսնուի, եւ ջուրին ձայնը կարելի է լսել նոյնչափ հեռաւորութեանէ :

Ոյժը, զոր կարելի է ստանալ այս ջրվէժէն, անպին է: Հաշուուած է թէ Նիակարայի ջրվէ- ժէն 7,000 000 ձիու ոյժ պարապ կը վատնուի, մինչդեռ կը հաշուուի թէ Վիքթորիա ջրվէժէն, երբ Զամպէզի գետը յորդութեան մէջ է եւ կիրճին վրայէն վազող ջուրին քանակութիւնը Նիակարա- յին կրկնապատիկը, իբր 33,000,000 ձիու ոյժ յուժպէտս կը վատնուի: Զոր եղանակին մէջ այս շատ կը պակսի, Բայց ամէնէն չոր տարինե- րուն մէջ անգամ, ժայռին վրայէն անցնող ջուրին քանակութիւնը շատ մեծ է, այնպէս որ քանի մը միլիոն ձիու ոյժ միշտ արամադրելի է կիրառու- թեան համար: Այժմ սկսուած է եւ կը շարու- նակուի սոյն ջրվէժին ճարտարագիտական գննու- թիւնները կատարել ոյժ արտադրելու նկատումով:

Կը հաշուուի թէ ընելիք առաջին ծախքը պի- տի ըլլայ իբր 500,000 Անգղ. ոսկի: Ասիկա պիտի բաւէ շինութեան մէկ հատուածը կառուցանելու միայն: Երազրուած է ոյժը բաժնել 300 մղոն շա- րաւիղի մը վրայ ոյժի կեդրոնէն չափելով: Այս տարածութեան մէջ կը գտնուի Պուլուէյօ աւանը, որուն փողոցի երկաթուղւոյ կառախուժերուն եւ լուսաւորման համար սոյն ելեկտրական ոյժը պի- տի գործածուի:

Այս ծրարին իրագործումը յոյժ մեծ ներգոր- ծութիւն մը պիտի ընէ երկրին առեւտրական, ճարտարական եւ հանքագործական զարգացման վրայ: Այս կողմերը կը գտնուին ընդարձակ Ուոն- թըլ հանքածուխին դաշտերը, ուր հանքածուխին խաւը իբր 37 ոտք թանձրութիւն ունի, եւ գետ- նին մակերեսին մօտ է: Ասոնք եւ բազմաթիւ ոս- կիի, պղինձի եւ ուրիշ հանքերու դաշտեր պիտի գործուին ելեկտրականութեան միջոցով շատ աժան եւ շահաւոր կերպով, վասն զի ջրվէժէն արտադրելի ոյժին ծախքը շատ քիչ պիտի ըլլայ: Եւ յոյժ ա- ւելի կարեւոր բան մը սա է թէ ինչ ինչ ժայռա- գոտիներու մէջ, որոնք քիչ հանք կը պարունակեն եւ զորոնք ցարք գործածուած մեթոտներով կարելի չէ զրամապէս շահաւոր կերպով գործել, այս մի- ջոցով շահաւորապէս պիտի գործուին: Կը յուսաց- ուի թէ երկաթուղիներն ալ պիտի բանին միեւ- նոյն ոյժով, մասնաւորապէս տեղային գիծերը, վասն զի պիտի տեսնուի որ շատ աւելի քիչ

պիտի ըլլայ ելեկտրականութեամբ մղուող կառա- խուժերուն ծախքը քան չոգիի վայրաշարժներունը եւ կառքերունը: Ուստի Վիքթորիա ջրվէժէն ար- տադրելի ելեկտրական ոյժին կարելութիւնները անթուելի են:

ՉԻՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ ՄԸ

Նշանակելի առիթ մըն էր երբ Չու Յու, Նան- քինի փոխարքան եւ գրեթէ 70,000,000 ժողովրդի կառավարիչը, հանդէպ Քրիստոնէական դաստիարա- կութեան իր համակրանքը ցուցուց, հրապարա- կաւ այցելելով Սբ. Յովնանու Գոլէճը ի Շանկհայ, հաստատութիւն՝ Ամերիկեան Եպիսկոպոսական Ե- կեղեցւոյն: Իր քարտուղարներուն եւ տեղային զլխաւոր պաշտօնատարներուն ընկերակցութեամբ աչքէ անցուց գոլէճի շէնքերը եւ աղջկանց Սէյնթ Մէյրի'զ Հոլ կոչուած դպրոցը, ներկայ գտնուեցաւ կարգերուն դասառութիւններուն եւ քննեց դա- սադիրքերը: Յաջորդ օրը 500 թաչլ (80 Օսմ. ոսկի) նուէր զրկեց երկու հաստատութիւններուն ալ ու- սանողներուն բաժնելու համար իբրեւ մրցա- նակ յառաջմանէ որոշեալ այսինչ նիւթերուն վրայ գրուած լաւագոյն ճառերու: Նաեւ Ամերիկ- եան Աստուածաշնչի Ընկերութեանէն քանց 200 օրի- նակ Նոր Կտակարան իր զլխաւոր պաշտօնատար- ներուն ընծայելու համար: Թէ մեր Տէրոջ վարդապե- տութիւնը ի՞նչ տպաւորութիւն ըրած էր Չին կա- ռավարչին վրայ, կը տեսնուի գոլէճին մէջ անոր ըսած սա խօսքէն. «Քրիստոսի վարդապետութիւնը Կոմ- փուկիտիսինէն խորունկ է, վասն զի Քրիստոս ըսած է թէ մենք պէտք չէ որ վրէժխնդրութիւն ընենք, այլ մեր միւտ երեսը դարձնենք երբ մէկը մեր մէկ երեսին դարնէ:» Անտարակոյս գոլէճը անոր համար գործնական ապացոյց մըն էր ընդունուած չարիք- ներու դէմ Քրիստոնէական փոխարինութեան, այն չարիքներուն՝ զոր Քրիստոնեաները կրեցին Կոմիամարտիկներէն, դեռ միայն: հինգ տարի ստաջ:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՇԻՐԻՄ ՄԸ

Եգիպտոսէ կը տեղեկագրուի թէ Մր. Թ'հիոտոր Մ. Տէյվլիս ճարտար Եգիպտոսանը գտած է արքա- յական շիրիմ մը որ անվրդով մնացած է ԺԸ. հա- րըստութեանէն, կամ իբր Ն. Գ. Ժ. Ե. Դարէն, հետէ: Կ'ըսուի թէ շիրիմը լեցուն է գանձերով որ կը բաղ- կանայ ճոխագոյն աւարէն, որուն նմանը հինն Եգիպ- տոս տակաւին տուած չէր երկրախոյզին: Այն է ԺԸ. հարստութեան պատկանող Ամէնհոթէփ Գ. ի կնոջ եւ Ամէնհոթէփ Դ. ի մօր, Թաի թագուհւոյն ծնո- ղաց, Եոսայի եւ Թուայի, թաղման տեղը: Ամէն-

հոթէփ Գ. այն թագաւորն է որ շինեց տաճարը, որմէ մնացած հետքերն են միայն Մեմնոնի ձայնաւոր արձանը ի Թեբայիդ եւ անոր ընկերը, այն արձանը որ կ'երգէ կամ կը մըմնջէ երբ արեւը մարը կը մտնէ երեկոյին: Եռւա եւ Թուա Եգիպտացի չէին, եւ կ'ըտուի թէ անոնց թոռը, Ամէն-հոթէփ Դ., նոր կրօնք մը ներմուծեց երկրին մէջ, իրենց դասեր Թաի թագուհւոյն ձեռամբ: Կը տեսնուի թէ ինչպէս Քրիստոնեայ, նոյնպէս կռապաշտ ծնողներ շատ ազդեցութիւն ունին իրենց զաւակներուն կրօնային գաղափարականներուն ձեւակերպման վրայ:

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ
(Շար. Լուսինի Բիւն)

Բայց հոգեկան կեանն է Նարեկացիի ամէնէն զօրաւոր կողմը: Հոս՝ ան բարձրութեան մը կը հասնի, որուն շատ քիչեր կրնան հասնիլ: Արդեօք կան ամանք մեր մէջ որ Նարեկացիի կեանքին այս կողմը միջին դարի յատուկ երեւոյթ մը կը սեպեն եւ հօգ կը դնեն իր տկարութիւնը, կամ գոնէ անկարեւոր բանի մը պէս զանց կ'ընեն նկատողութեան առնել զայն: Եթէ կան իրաւ, անոնք մեծ անիրաւութիւն մը ըրած կ'ըլլան մարդկային բնութեան դէմ ընդհանրապէս եւ Նարեկացիի դէմ մասնաւորապէս: Բայց մենք անցնինք հասկընալու իր ներքին հոգեւոր կեանքը: Այս մասին իր գիրքին մէջ գտնուած յայտնութիւնները առօք են:

Նախ, անձնական մեղքի եւ մեղանչական բնութեան նկատուածով խորունկ եւ տխուր գիտակցութիւն մը ունի: Շատեր մեղաւոր ենք կ'ըսեն եւ ըսածնուն ալ համոզուած են անկեղծօրէն, բայց կրնայ ըլլալ որ այդ համոզումը տրամաբանելով, հետեւցնելով գոյացած ըլլայ իրենց մէջ: Աղամ մեղանչեց եւ անոր մեղանչական բնութիւնը մեզի անցաւ. ես ալ ժառանգած եմ այդ բնութիւնը. ասկէ զատ սուտը, խարէութիւնը մեղք է, ու ես կը ստեմ հրեմնն ու կը խարեմ եւ կեանքիս մէջ շատ թերութիւններ ունիմ, հեռուապէս մեղաւոր մըն եմ թէ՛ սկզբնապէս թէ՛ անձնապէս: Սակայն եթէ մարդ, առանց տրամաբանելու կամ հետեւցնելու, իրեն ներկայացուած հոգեւոր բարձր կեանքի մը ազդեցութեան տակ՝ մեղաւոր ըլլալու բնական-ցոյնի-նը կ'ունենայ, այս միւսէն բոլորովին տարբեր է: Եւ Նարեկացիինը այս վերջին տեսակէն է:

Ասկէ զատ մեղքի վրայ իր ըմբռնումը շատ խորունկ է: Արտաքին մեղքերու խիստ շատ տեսակներ եւ օրինակներ կը համրէ, բայց առօնց բոլորին հիմը կը դնէ բուն իսկ հոգիին խորը, կամ-

քի եւ յօժարութեան սահմանին մէջ: Սիրտը Աստուծոյ ազդեցութենէն հեռու պահել եւ Անոր անհնազանդ գտնուիլ, այս իսկ է իրեն համար մեղքը եւ յանցանքին աղբիւրը: «Քու օրէնքներդ գիտնալով հանդերձ անպատշաճ կերպով ընթացայ չարաչար մոլորելով, աս է ամէն բանով ամէն տեսակ մեղանչելը: Քու կամքիդ սահմանէն դուրս վազեցի, որ մեղադրելի անօրէնութեան ստոյգ էութիւնն է: Անչափ չարիք գործեցի չարունակ եւ մեղքերս կատարելութեան հասցուցի. ինչ որ յանցաւոր ըլլալու ճշգրիտ պատկերն է: Սպառնացար եւ չզարհուրեցայ, աղաչեցիր եւ ընաւ ականջ չկախեցի, ինչ որ անհնազանդութեան յայտնի նշանն է» (Բան Ի. 1):

Երկրորդ, մեղքէ ազատելու եւ փրկուելու համար բողոքովին յուսակտուր է իր անձէն եւ ուրիշներէ, ու հոգիի փրկութեան միակ աղբիւրը եւ պատճառը Քրիստոս ինքն է. եւ միջոցը Անոր շնորհքը: Այս կէտը, սակայն, երբեմն կասկածի տակ կ'իյնայ, երբ կը հանդիպինք այնպիսի աղօթքներու որոնց մէջ սուրբերու բարեխօսութիւնը կը խնդրէ կամ նիւթական միջոցներու մեծ կարեւորութիւն կ'ընծայէ, ինչպէս միւսոնի աղօթքին մէջ: Ամբողջ գիրքին մէջ 4-5 տեղ սուրբերը բարեխօս կը բռնէ եւ աղօթք մըն ալ ունի ուղղակի Ս. Աստուածածինին ուղղուած: «Եւ արդ այսքան յուսահատութիւններէ եւ անարկու սրտաբեկութիւններէ ետքը, Աստուածային բարկութեան պակուցանող սաստկութենէն տազնապա՛մ՝ տրտում հոգիով քեզի կ'աղաչեմ, Սուրբ Աստուածածին: Մարդէ գոյացած հրեշտակ, մարմնատեսիլ Քերովբէ, երկնաւոր արքայուհի, օղի նման զուտ, լոյսի պէս մաքուր . . . բարձրեալ Հօրմէն զօրացած ու հովանաւորուած, Հոգիին հանգիստովը պատրաստուած ու մաքրուած. Որդիին բնակութիւնովը յարգարուած եւ կազմուած: Հօրը միածինը քու ալ անդրանիկդ է. ծնունդով որդիդ՝ իսկ արարչութիւնով Տէրդ» (Բան 2. 1): Եւ ամբողջ այս գլուխը այսպէս գովեստով եւ աղաչանքով կ'երթայ եւ Քրիստոսի փառատրութիւնով մը կը վերջանայ: Առօնցմէ զատ տեղ մըն ալ աւելի տարօրինակ բան մը կ'ըսէ. «Առանց որոնց (փրկեալներուն) ոչ է մատչիլ առ Տէր» (Բան 3. 3): Այս քանի մը հազուադիւտ պարագաները առաջին նայուածքով այնպէս կարծել կու տան թէ Նարեկացի հոգեւոր փրկութեան ինչ ըլլալը շատ սխալ ըմբռնած է, ինչպէս բնական ալ էր իր ժամանակին համար: Սակայն այնպէս չէ. փրկութեան միայն Քրիստոսէ բխիլը եւ Անոր ճրիշնորհքը ըլլալը այնքան օրոշ, այնքան բացայայտ է իր

գիրքին մէջ, որ հակառակը պնդել ձրի գրպար-
տութիւն պիտի ըլլար Նարեկացիի հանդէպ: Իսկ
վերջ յիշուած խօսքերը մեկնել ոչ այնչափ դիւ-
րին է, ոչ ալ, աւելի, այնչափ կարեւոր: Բայց օս-
րացատրութիւնը բանաւոր կ'երեւնայ մեզի: Նա-
րեկացի կը հաւատար սուրբերու բարեխօսութեան,
բայց ոչ այնպէս ինչպէս կը հասկցուի առ հասարակ,
այսինքն իբր պայման հոգիի փրկութեան: Խօսքը
Պապական վարդապետի մը ամանք, Հ. Գարբիէլ Ա-
ւետիքեանի: Կոյօին ուղղուած աղօթքի լուծու-
մին մէջ կը գրէ ան. «Այստեղ յոսուհարսութեանց
եւն. . . Եթէ փրկութեան գերբնական բարիքին
համար ըսուած են (այս խօսքերը) իբր թէ Աստու-
ծոյ գորութիւնն չի ալ ստանալ կարելի չէ զայն,
միշտ չար է, եւ Սբ. Հոգիին դէմ մեղք: Եւ սա-
կայն յայտնի է թէ Սբ. Վարդապետը այս իմաս-
տով չգործածեր, որ ամէն տեղ Աստուած կարող
կը դաւանի ամէն անհնարութեան եւ միշտ շնորհք
եւ փրկութիւն կը խնդրէ: Ուստի զգոյշ ըլլա-
լու է որ չըլլայ թէ մէկը տգիտաբար շիտակ գըր-
ուածները թիւր հասկնայ եւ գրողները մեղադրէ,
որով միայն իր անձը ազէտ ցուցուցած կ'ըլլայ»
Եւ Առանց որոյ ոչ է հարկը Տէր խօսքը մեկնե-
լու ատեն կ'ըօք. «Այսինքն առանց միջնորդու-
թեան սրբոց: Բայց աս հասկնալու է ոչ թէ բա-
ցարձակապէս Աստուծմէ ընդունուած ամէն բա-
րիքի համար, քանզի այսպէս բացարձակ եւ ընդ-
հանրական միջնորդ միայն Յիսուս Քրիստոս մեր
Տէրն է: Այլ հասկնալու է Աստուծոյ աւելի հա-
մարձակ մօտենալու մասին, քանզի սուրբերու ար-
ժանաւորութիւնը եւ համարձակութիւնը աւելի
վստահութիւնով Աստուծոյ մօտենալու կ'օգնէ:
Նաեւ հասկնալու է այն հաստատութեան հա-
մար զորս Աստուած սուրբերու բարեխօսութիւ-
նով տալ սահմանած է, ինչպէս Յօրի բարեկամնե-
րուն թողութիւն տալ սահմանուած էր Յօրի ա-
ղօթքով:» Բայց յիշուած քանի մը խօսքերը ա-
ռանց մեկնութեան ալ իրենց բուն նշանակութիւ-
նը կը գտնեն, երբ կարդանք իր գիրքի ամբողջա-
կան ողին հոգեւոր փրկութեան նկատուածով: Ահա
քանի մը օրինակ շատերու մէջ:

«Եւ արդ որո՞ւ պաղատիմ. . . քեզի, բարերար
Աստուած, որ կենդանի ես եւ ամէնուն կենդա-
նութիւն կու տաս» (Բան Մ. Ա. 1). — Քանզի եթէ
նոյն իսկ Աբրահամին աղաչեմ, ծարաւէն պապա-
կած մեծատունին առակը վարդապետելով կաթիլ մը
ջուր չկրնար տալ ինձի: Իսկ եթէ Ահարոնին, ինք
ալ մաղթողի մը կարօտ եղաւ. եւն. . . Իսկ եթէ հա-
ւատքի վէմ Պետրոսին, ան ալ քու խնամքէդ քիչ մը

չեղելուն պէս իր զգացումներուն գերի եղաւ: Եւ
քանզի հոգի փրկելու մէջ մարդերու կարողութեան
օտմանը չսփոռեցաւ. . . ահա քեզի կը դիմեմ, կեն-
դանի Աստուծոյ Որդին. . . ահա դուն ես կեան-
քը, դուն ես փրկութիւնը, դուն ես երանութիւ-
նը» (Բան Հ. 1. 2. 3) — «Անխախտ կեանքի պատ-
ճառ Տէր Յիսուս Քրիստոս. . . որ հոգեկան վեր-
քերու պատատ պատրաստելու համար չես կարօ-
տիր ոչ օպեղանիներու, ոչ ժամանակի, ոչ միջ-
նորդի» (Բան ԽԳ. 1. 2). — «Ամենառատ աննուազ
երկայնամտութիւնովդ լսէ ինձի դառնացնողիս,
դուն քր ամէն պարագայի տակ հոգիի փրկութեան
միակ միջոցն ես, բոլորին Աստուածը. . . մեղան-
չողներու քաւիչ, մահացածներու փրկութիւն»
(Բան ԼԲ. 2):

Նոյնպէս շատ օրինակներ կան ցուցնելու թէ
իր արժանիքին կամ իր ըրածներուն վրայ ալ յոյս
չունի երբեք: «Քու շնորհներուդ առջեւ թող
չզօրանան մարդկային գործեր» (Բան ԺԳ. 2):
Ու դարձեալ. «Որ ապրիմ իմ գործքերէս աւելի
քու շնորհներուդ փարելով» (Բան ԼԱ. 2): Վեր-
ջապէս. «Արդիցի, փակցի, կնքցի ինձմէ կեան-
քի հնարաւորութիւնը սեւէ կողմէ, որպէս զի փըր-
կելով դիս, որ մեղքով կապուած եմ, կրկին փա-
ռաւորուիս գովութիւնով» (Բան ԻԸ. 2):

(Շարունակելի) ՌԱՍԵՐ

ՄԻԱՅՆ ՔՐԻՍՏՈՍ

«Ո՞վ ունիմ ես երկնից մէջ. երկրիս վրայ ալ
քեզմէ ուրիշը չեմ ուզեր» «Ինչպէս եղջերուն
ջուրի վտակներուն կը փափաքի, անանկ ալ իմ
անձս քեզի կը փափաքի, ով Աստուած»:

Ան երջանկութիւնը, զոր ես իմ բարեկամնե-
րէս ու մտերիմներէս կը քաղեմ, նման է ստուերի
մը որ շուտով կ'անհետանայ, կամ պատառատուն
վերարկուի մը որ միայն քիչ մը արժողութիւն
ունի: Սակայն, Յիսուս, այն երջանկութիւնը, որ
քեզմէ կու գայ, իմ խռովեալ հոգիս կը լեցնէ, զիս
կ'սփոփէ ու կը քաջալերէ, քանզի անոր մէջ կը

(*) Ու յիշելու է թէ այդ ատեն հոգեւոր փըր-
կութիւնը փոխարէնով միայն կը ստացուէր, եւ
եկեղեցին սակարկութիւն կ'ընէր ներողութեան
համար: Եւ տակաւին ծնած չէին Անսերմոս եւ
Բեռնարդոս որ Նարեկացիէն դար մը՝ ետք միայն
վարդապետցին հաւատքով արդարացում եւ շնորհ-
քով փրկութիւն:

բնակի ամէն կատարելութիւնը : Դուն, Յիսուս, ամէն ժամանակներու ժամանակակից ես, ամէն վիճակներու կը համեմատիս. բժիշկ ես առողջացընելու իմ տկար հոգիս ու մարմինս, փաստաբան ես զիս արդարացնելու, տէր ես կառավարելու իմ անսանձ կիրքերս. բարեկամ ես ինծի կարեկից ըլլալու, հայր ես զիս հոգալու, հիմ ես շինուածքս վրադ կրելու, արմատ ես կենդանացընելու, ազբիւր ես զովացնելու իմ պապակս, ջերմութենէ պահելու հովանի ես, կենաց հաց ես, առաւօտեան լուսաւոր ես, արդարութեան արեգակ ես : Իմ մարմինս ու միտքս կը տկարանան, բայց դուն իմ սրտիս զօրութիւնը եւ յաւիտենական բաժինս ես : Չեմ կրնար երբեք առանց քեզի ապրիլ. երբ քեզ ունիմ, ամէն բան ունիմ : Ու չեմ կրնար վտանգի մէջ իյնալ, զի ալ առանց բարեկամի չեմ : Չեմ ըլլար աղքատ ու թշուառ, ոչ ալ վախկոտ ու տրտում, երբ դուն իմ հետս ես : Դուն ես իմ բոլոր իղձս, իմ յոյսս ու խաղաղութիւնս, իմ ուրախութիւնս, իմ կեանքս, իմ փառքս, յաւիտեան :

Ուրֆա

Ս. ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՍԱԼՄԱՍՏԻ ԱՒԵՏԱՐԱՆԶԱԿԱՆ ԳՈՐԾՐ ԱՆՑԵԱԼՈՒՄ ԵՒ ՆԵՐԿԱՅՈՒՄ

Սալմաստում աւետարանչական գործը սկսուել է 1865 թւին Ամերիկայի Պորտ Ընկերութեան կողմից ուղարկուած միսիոնար Տր. Շէտի ձեռամբ : Ապա հետզհետէ եկած են ուրիշ նոր միսիոնարներից Տր. Բայտ, Մր. Մէքլին, Միս Վէնտուզի եւ Միս Ռաբբրդ : 1888 թւին հաստատած են երկուսն Վարժարաններ մօտ 200 աշակերտների համար, յանձնելով դաստատութեան պաշտօնները կարող աւուցչաց եւ ուսուցչուհեաց :

Կիրակնօրեայ կանոնաւոր պաշտամունքներ տեղի ունեցած են Նաֆթվանում, Հին-քաղաքում, Գիւլիւզանում եւ Ուլայ գիւղերում, եւ մեծ թւով ունկնդիրներ հոգեւոր ժողովներին ներկայ եղած են : Սակայն Հաղորդութեան սեղանին մասնակցողների ընդհանուր թիւն 40ից չէ անցած : Բայց երկար տարիների գործունէութիւնը մի զգալի արդիւնք չունենալուն 1898 թւից սկսեալ հետզհետէ ուսումնարաններն փակուած են, եւ միսիոնարներն Դավրէժ ու այլ ուրեք գացած :

Ներկայումս Պորտ Ընկերութեան կողմից Սալմաստում միայն մէկ Ասորի քարոզիչ կայ, որ Ուլայ եւ Նաֆթվան գիւղերում կիրակի օրերն կը քարոզէ Հայերէն եւ Ասորերէն լեզուներով : Ուսումնարաններ երբեք չունին, իսկ Հաղորդու-

թեան սեղանին մասնակցողների թիւն 12ից չէ անցնում : Մի աչքի ընկնող բայց ոչ հաճելի փոփոխութիւն, որ վերջի քանի մը տարիներում մտքած են իրենց եկեղեցւոյ մէջ, Հաղորդութեան ժամանակ գինիի փոխարէն օշարակի գործածութիւնն է, զոր Տր. Բայտ հաստատած է, բայց Դավրէժում անդամները այդ բանին հակառակելուն սկսած են կրկին գինի գործածել Հաղորդութեան ժամանակ, եւ կը պատմեն որ Տր. Բայտ միայն հացից (ժարմից) կը վերցնէ, իսկ գինիի բաժակից ոչ, որը ումանց գայթակղութեան առիթ եղած է, ինչու որ Սբ. Գրոց մէջ այդպիսի բան մը հաստատող համար մը գոյութիւն չունի, սկիզբից գինի է գործածուել : 1898 թւից Սալմաստում մուտք գտած է նաեւ չափահանների մկրտութեան գաղափարը, որոնք հակառակ իրանց կամաց առանձին ժողովներ ու Հաղորդութեան սեղան կ'ունենան, ամէն կիրակի կանոնաւոր ժողովներ կ'ունենան 1903 թւում Հին-քաղաքի մէջ հաստատուած Զուրցերական կրթական պատասխարանի վարժատան սրահում : Հաղորդութեան անդամների թիւն Տր. կը հասնի : Վերջին շարժման բուռն խորհրդակցութիւններ տեղի կ'ունենան այս երկու բաժան եկեղեցիներն միացնելու հետեւեալ պայմաններով : Ա. Իւրաքանչիւրին ազատ թողնել մկրտութեան կէտում հետեւելու իւր խզմատների ձայնին : Բ. Հաղորդութեան ժամանակ օշարակի փոխարէն դարձեալ գինի գործածել : Յանկալի էր որ այս միացումը շուտով կատարուէր, որով օրինակ պիտի լինէր նաեւ ամէն այն եկեղեցիների համար, որոնք շատ անգամ մի փոքր տարբերութեան համար իսկոյն գատ եկեղեցի կը կաղմեն ու միմեանց կը մեղադրեն, կարծէք երկուսի քարոզած կամ պաշտածը նոյն Բրիտանոս-Փրկիչը չլինի :

ՄԱՐՁՈՒԱՆԵՍ

Տնօրէն Սալմաստի Զուրցերական Վարժարան

ՄԱՐՁՈՒԱՆԵՍ

Շատ մը տեղեր Մարզուանի գոլէճին Բրիտանեականին վրայ շատ աղէկ գաղափար մը չունին, իբրեւ թէ իրեն հասուցած շրջանաւարտները աւելի Բրիտանեական առողջ գաղափարներով եւ սկզբունքներով անուցուած ըլլալու տեղ՝ հակառակ հոգիով մը ներշնչուած եւ անհաւատի հովերով փքացած ըլլան : Ասիկա սխալ ըմբռնում է՝ կը խոստովանիմ որ ես ալ այնպէս համոզուած էի, բայց մինչեւ որ մէջը բաւական երկար առեւ չկեցայ՝ չկրցայ հասկնալ եւ տեսնել իր ընթացքն ու վիճակը : Մանաւանդ այս տարի անցեալներէն ա-

ևկի առաւելութիւններ ունեցաւ իր հոգեւոր ժողովներու կարգադրութեամբ: Տեօջութիւնը աշակերտաց Գրիտոնէութեան ազէկ հոգ կը տանի եւ կ'աշխատի ալ:

Ուրիշ բան մը, որ մեծապէս կ'օգնէ այս մասին, ճեմարանին միեւնոյն շէնքին մէջ եւ աստուածաբանականներուն միեւնոյն ժողովներուն մէջ գտնուիլն է, որով աշակերտներ աւելի մօտ կու գան Սուրբ Գիրքին: Եւ աս մասին ուրախ ենք ըսելու թէ աստուածաբանականներէն ալ ջերմեանդ աշխատողներ ունինք ժողովներուն մէջ:

Գալով քաղաքի կրօնական ժողովներուն, հոն ալ կը տեսնենք թէ մարդիկ հետաքրքրի են եւ աղուոր կազմակերպութիւն մը ունին որ դարձեալ կարող անձնաւորութիւններէ կը կառավարուի:

Ժողովարանի բեմը ատեն մը պաշտօնեայ չուներ, այլ փրօֆէսորներէ եւ այլեւայլ անձնաւորութիւններէ կը կառավարուէր: Բայց այս տարի Պատ. Գաւմէ Ապահատեան հրաւիրուած է, որը սիրով ընդունեց զալ: Միայն որովհետեւ հազիւ Օգոստոսի մէջ պիտի կրնայ գալ, 4 ամիօսի չափ Հայկազուն էֆ. Սանդաւոսի հրաւիրուած է պաշտօնավարել: Ինքը թէեւ ճեմարանին մէջ է, բայց աստուածաբանականներու շրջանը Չատկին լինցած կ'ըլլայ մինչեւ Սեպտեմբերի վերջերք: Աստուածաբանականներուն մեծամասնութիւնը այս միջոցին այլեւայլ տեղեր դործ կ'ունենայ քարոզելու համար:

Կը մաղթենք որ աւելի զօրանան իրենց ջերմեանդութեան մէջ եւ գործեն եկեղեցւոյն համար: Մարզուան, 3 Մայիս, 1903

Ա. Ի. Ե. Տ. Ա. Բ. Ե. Ր

ՏՐԱՊԻՉՈՆԷ

Աւետարանի հին բարեկամներէն մին, որ իւր կեանքին վերջալոյսին մէջն է արդէն, իւր հուսկ յետին ակնարկը կը նետէ այն վաղեմի օրերուն վրայ երբ ինք եւ Աւետարանի պատանի էին դեռ: Այժմ ինք երկար տարիներու բեռան տակ ծերացած, կըսած ու տկարացած թէեւ, մեծ հաճոյքով կը զիտէ սակայն որ Աւետարանի ոչ միայն չէ ծերացած իրեն պէտ, այլ տարուէ տարի յառաջդիմած է եւ այսօր կատարեալ երիտասարդ է: Սրտազին կը մաղթէ որ բնաւ չծերանայ ան: Այս բարեկամը, Փիլիպպոս (պապ) Երանոսեան, մեր եկեղեցւոյն ամենահին ու միակ ապրող անդամն է: Մեր պապին պաշտած է Պոլիս, Նիկոմիդիա, Կարին, Սարաբերդ, եւն.: Եթաուն տարիներ Գրիտոսոսի եկեղեցւոյն անդամը եղած է, հետեւաբար Աւետ. եկեղեցւոյ մանկական թոթովումները լսած է: Մտնէն ճանչցած է հին միսիոնարները եւ իւ-

րաքանչիւրին անուան կը կցէ անոր նշանաւոր արարքներու պատմութեանց մին: Զարմանալի յիշողութիւն ունի: Մեր եկեղեցին կենդանի պատմագիրքն է: Աւետարանի յոյժ սիրահարն եղած է, խիտ կանուխ, անոր Երեմիայն կոչուած ատենէն սկսելով մինչեւ հիմա: Կ'ըսէ թէ շատ բան կը պարտիմ Աւետարանի: Այն իմ կեանքի անբաժան ընկերն, դժնդակ պարագաներու միսիթարիչն, խրատուուն եւ ուղեցոյցն եղած է: Շատ բաներ սորված եմ անոր պատուական էջերէն: Ուստի ապերախտութիւն պիտի ըլլար ինձ, առանց շնորհակալութիւնս կանխաւ եւ հրապարակաւ յայտնելու, մեկնիլ այս կեանքէն: Շնորհակալ եմ քեզմէ, Աւետարան: Յաւերժ ապրէ դուն:

Մեր պապին խոնարհ զիտողութիւն մը կ'ուզէ ընել եւ կ'ըսէ. «Աւետարանի ժամանակին համեմատ իւր պարունակութիւնը յարգարեց, բայց եղբարեւորական բաժին մը չունի այդ նիւթին յատկացուած: Երկէ թէ ընթերցողացը մէջ փոքր թիւ մը չեն կազմեր հոգադործներ: Կը թելադրեմ որ, եթէ կարելի է, գէթ սիւնակ մը յատկացնէք այդ նիւթին, օգտակար լուրեր եւ հրահանգներ հաղորդելու համար: Իբր նմոյշ մը, փորձուած զեղ մը կ'առաջարկէ ցորենի մէջ գտնուած մար հիւանդութեան առջեւը առնելու համար:»

Գալ մը արջասպ (կէօզ թաշը) լուծէ 60 օխա ցորենի սերմ լաւ մը թրջելու բաւականաչափ ջուրի մէջ եւ սերմը ձգէ գիշեր մը: Ատուուն ցանէ օվորականէն քիչ մը աւելի խիտ: Հունձքին մէջ մուր չըլլար: Թէ ինչ քիմիական ազդեցութիւն կ'ընէ արջասպը մուր ըլլալիք ցորենին վրայ, կը թողու՞մ որ քիմիագէտներ բացատրեն. իսկ ես կը մաղթեմ որ հոգադործներ առիթէն օգտուին, կ'ըսէ մեր պապին:

Տրապիզոն

Գ. Ի. Տ.

Կ Ի Ր Ա Կ Ն Օ Ր Ե Ա Յ Դ Պ Ր Ո Ց

ԻԹ ԴԱՍ. ՅՈՒԼԻՍ 16
Զարչաբուրդ Փրկիչ (Ե. Ծ. 13 — ԾԳ. 12)
Ոսկեղէն համար. Ե. Ծ. 6:
Ամիսօրեայ ընթերցողութիւն. — Բ. Ե. Ծ. 13 — ԾԳ. 3: Ինձի համար ամէնէն իմաստուն ընթացքն է հաւատալ Աւետարանին ինձի տուած լուրին: Մեղքը իրաւամբ կոչուած է յիմարութիւն: — Դ. Ե. Ծ. Գ. 4-12: Ով Տէր, ցուցուր ինձ թէ իմ մեղքերս քու չարչարանքներուդ պատճառ եղած են եւ կ'ըլլան, որպէս զի ամէն օր զգուշանամ: — Դ. Ե. Փիլ. Բ. 1-11: Մինչ Եթաուն ինձի համար խոնարհեցաւ, ես ինչո՞ւ չուզեմ ուրիշներու ծառա-

յել: Ով Տէր, ինձ սորվեցուր միտքդ: — Եշ. Ա. Պետ. Բ. 24-25: Մեր Տէրոջ միտքը հասկնալէս ետքը անոր շաւիղներուն հետեւիմ: Ասոր համար պարտիմ մահուան մեռնիլ եւ արդարութեան ապրիլ: — Ուր. Ես. ԽԲ. 1-9: Ով Տէր, այսօր քու Հոգիդ իմ վրաս ալ դիր, որպէս զի ես ալ կարող ըլլամ իմ Տէրոջս պէս ճշմարտութիւնը հրատարակել կեանքիս մէջ: — Շք. Ես. ԽԲ. 1-6: Տէրը զիս ալ արգանդէն կանչած եւ անունս յիշած է: Ձիս ալ ստեղծած է իրեն ծառայ, Մեծիային պէս «ծառայ» մը ըլլալու համար: — Կիւր. Հոով. Ե. 1-11: Գոհութիւն Աստուծոյ Քրիստոսով ինձի յայտնած իր սիրոյն համար:

Մանօրհաններ. Եսայեայ գիրքը գլխաւորապէս երկու մասի կրնայ բաժնուիլ. մէկ մասը Ա. ԼԹ., եւ միւսը՝ Խ. 42. Գլուխները: Մեկնիչներէն ոմանց կարծիքն այն է թէ երկրորդ մասը Բաբելոնեան գերութեան վերջերը (Ն. Բ. 500էն ետքը) գրուեցաւ ուրիշ մարգարէէ մը: Այս դասին համարները հինգ մասերու կը բաժնուին, 1) ԾԲ. 13-15, Մեծիայի յաջողութիւնը, 2) ԾԳ. 1-3, Անոր կրած անարգանքը, 3) ԾԴ. 4-6, Անոր չարչարանքները, 4) ԾԴ. 7-9, Խոնարհութիւնը, 5) ԾԴ. 10-12, Յաղթանակը:

ԾԲ. 15: Չորհոյնէ. ապշեցնէ: Ինչպէս չարչարուող Մեծիան զարմացուց այն ժամանակի Հրեաները, նոյնպէս Յիսուս Քրիստոս, այսինքն չարչարուող Աստուած, գաղափարը ամէն դարու մէջ կը զարմացնէ կ'ապշեցնէ մարդիկը: ԾԴ. 1: Մեր գոհութիւն: Ասիկա սապէս ալ կրնայ թարգմանուիլ. «Ո՞վ հաւատաց մեր յածին» Այսինքն թէ եւ Աստուած մեզի խօսեցաւ, սակայն մենք չհաւատացինք: Հմր. 2: Չարչարուող Մեծիան մարդոց աչքին անկարեւոր բան մըն է: Այն սաստիճան լքուած է որ անոնց ուշադրութիւնը չգրաւեր: Հմր. 4, 5: Կարծեցինք թէ նեղութիւնը մարդուս կու գայ իբրեւ պատիժ անոր յանցանքներուն, բայց անիկա մեր մեղքերուն համար չարչարուեցաւ: Հմր. 8: Նեղութեամբ և գոհապարտութեամբ վերջաւորուեցաւ: Ասիկա բանաւոր է թարգմանել նաեւ սապէս. «Ան յանիրաւի մեղքուեցաւ ք եւ անոր ողբերգութիւնը... այսօրինքն անոր չարչարանքները տեսնողները չհամակրեցան անոր վիճակին: Եւ զանիկա յանցապարտի մը գերեզմանը դրին. բայց որովհետեւ անիկա մեղք չունէր, մահուան ստոնքը հարուստ եղաւ: Մեռնողին համար արժէք չունի հարբատութիւն, Ֆիզիքական ոյժ եւ աշխարհային սեւէ փառք, այլ մաքուր խիղճը, ընտիր նկարագիրը, եւ գերեզմանէն անդիի համար յոյսն է ճշմարիտ

հարստութիւն: Հմր. 10: Մեղաւորներուն համար Տէրոջը ծառային չարչարանք կրելը պատիժ մը չէ, այլ բարոյական եւ հոգեւոր աշխարհին համար Աստուծոյ ընդհանուր մէկ տնօրինութիւնը:

Մոռանալիք. 1. Տէրոջը ծառայ. Եսայեայ մէջ Տէրոջը ծառայ ասացուածը տեսակ տեսակ իմաստներով գործածուած է: Ընդհանրապէս կը նշանակէ ամբողջ Իսրայէլը (ԽԱ. 8-20, ԽԲ. 1-9), Իսրայէլի իյիսանը (ԽԲ. 1-7), Տէրոջը դեսպանը (ԽԲ. 18-25), Մարգարէ (Ծ. 10): Հրեայ ժողովրդին համար չարչարուողը (ԾԲ. 13-ԾԳ. 12), Ասոնք ամէնը, մանաւանդ վերջինը, Քրիստոսի վրայ կատարուած են լիովին (Մատ. Ի. 25-28, Դու. ԻԲ. 26, 27):

2. Ինչ է նեղութիւններուն պարօժանը: Ընդհանրութիւնը կը կարծէր թէ ամէն մէկ արկած մեղքին պատիժն է: Կան չարիքներ որոնք երբեք յարաբերութիւն չունին մեղքի հետ. զոր օրինակ գետնաշարժը, համաճարակ հիւանդութիւններ: Յօրայ գիրքը թէ եւ ցուցուց թէ այսպէս չէ բանը, բայց կարող չեղաւ երեւան հանել նեղութիւններուն բարձրագոյն նպատակը: Այս համարներուն մէջ կը ցուցուի թէ նեղութիւններ եւ չարչարանքներ շատ անգամ ուրիշներու համար կը կրուին: Արեւցորդի մը կամ ոճրագործի մը պատճառաւ անոր անմեղ բարեկամները կը տառապին եւ կը վշտանան: Բայց այո վերջին տեսակէն ետոջ չարչարանքը չարչարանքներուն ամէնէն փառաւորն է. վասն զի արդիւնք է մարդոց իրարու հետ սերտ յարաբերութեան եւ սիրոյն, եւ մեղքը ջնջելու ամէնէն ազդու կերպն է:

3. Այս համարներուն մէջ հաճելի այն մասերը որոնք կարգաւորուած Քրիստոսի չեռնէն ճշ: Աստուած ի սէր մեր չարչարանք կրեց Քրիստոսի մէջ մեր մեղքերուն համար, եւ այս չարչարանքը մեզի համար քաւութիւն եղած է:

4. Այս համարներէն ինչպէս կը հասկնանք Քրիստոսի քաւութիւնը:

Հոգեւոր դասեր. Մինչ Քրիստոս մեզի համար չարչարանք կրած է, դուն այս չարչարանքները կ'ընդունիս իբրեւ քու քաւութիւնդ եւ փրկանքդ: Թէ կ'ընդունիս, իբրեւ արդիւնք հաւատքիդ, 1. Քրիստոսը պիտի սիրես բոլոր սրտովդ, 2. Մեղքէն սաստիկ պիտի զզուիս, 3. Բոլոր կարողութիւնովդ պիտի աշխատիս այլ եւս չվտանցնել Քրիստոսը, 4. Ուրիշներն ալ այս սիրոյն պիտի հրաւիրես:

Նայէ որ չգտնուիս այնպիսի վիճակներու մէջ որոնց պատճառաւ ուրիշները տառապին:

Ուրիշներու մեղքերը կրելու համար անոնց վիշտերուն մասնակցիլը կը ցուցնէ հոգեւոր բարձր կեանք, եւ բարոյական մեծ ոյժ:

Քրիստ. Ե. Ընկերակցութեան աղօթքի ժողովը տեղի պիտի ունենայ վաղը ժամը 7 1/2ին (Ը. Թ.) Ի Ռէօթ, Գուճափու: Նիւթ Դուկ. ԺԴ. 2. 6

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Ն Ե Ր Ք Ի Ն

Մայրաքաղաքի փոթորկին մեծաները քննելու պաշտօնով կազմուած յանձնաժողովը քանիցս գումարեցաւ ռուսաց մասիրելու համար մղկիթներու, մէսիտներու, թէքքէներու մեծախն վրայ տրուած տեղեկագիրը, թաղապետական պաշտօնատուներու տեղեկագիրները եւ արկածեալներու աղերսագիրները : — Ականակու Օսմանիյէ պատուանշան շնորհուեցաւ Յրանսայի վարչապետ Մ. Ռուսիի : — Հապէշ պատուիրակութեան անդամ Հաճի Ապուլլահ Սատրգ փաշա Եւրոպա ուղեւորեցաւ : — Շուէտ-Նորվեգիան դեսպան Մ. Պէք Ֆրից, որ նոյն պաշտօնով Վիէննա կը փոխադրուի, շարաթ մեկնեցաւ մայրաքաղաքէս : — Մայրաքաղաքի քարտիներու ընկերութիւնը արտօնուեցաւ շոգնաւակներ բանեցնել Պոլսոյ եւ Ղալթիոյ քարափներուն միջեւ, նաեւ շահագործել քարափներու մթերանոցները : — Իւսկիւտարի, Գուգկուճուզի եւ Գատրքէոյի միջեւ թրամուէյ բանեցնելու մենաշնորհ խնդրուած է, եւ 1,000 ոսկի ալ աւանդ թողուած է Գրէտի Լիոնէի : — Հոռմի երկրագործական միջազգային համաժողովին Օսմ. պատուիրակները մայրաքաղաքս վերադարձան : — Կայս. Բժշկական վարժարանը, նկատելով թէ քացախներու եւ կազօզներու մեծագոյն մասը առողջութեան մեծագոյն նիւթերէ շինուած է, առողջապահական քննչութեան ղեկօյց ժամանակ ժամանակ քննել զանոնք եւ մեծապար դատուածները գրաւել, վաճառողներն ալ օրինական պատիժներու ենթարկել : — Ուրբաթ գիշեր Խասքէոյի Հրէական մասին մէջ հրդեհ ծագեցաւ եւ իբր 100 տուն, 10 խանութ եւ Հրէական վարժարան մը այրեցան : Անպատուար մնացող ընտանիքներու թիւը այրած տուներուն եռապատիկն է եւ թերեւս աւելի ալ : Ընդհանուր մեծաք 15,000 ոսկի կ'ենթադրուի, որոնք 3,500ը միայն ապահովադրուած էր :

Նահանգներ. Մայրաքաղաքի անցեալ կիրակիի եւ երկուշաբթիի փոթորիկը գաւառներուն մէջ ալ տեղի ունեցած է իր աւերիչ հետեւանքներով, ինչպէս կը տեղեկագրուի Ռոստոսթօէ, Սիլիվրիէ, Չաթարայէ, Էտիրնէէ, Էնկիւրիւէ, Ծողզատէ, Միտիլիէ, Սէլանիկէ եւ այլ կողմերէ : — Րումէլիի նահանգներուն մէջ Պուլկար աւազակներուն հալածումը կը շարունակէ միշտ նոյն յաջողութեամբ : Ամէն օր անոնցմէ ոմանց սպանուած կամ ձերբակալուած կը ծանուցուի ձեռնհաս իշխանութիւն-

ներէն : — Ամսոյս սկիզբները Իփէքի եւ Թրկովիշ-թէի, Կոստնէի, Օսմանիյէի եւ Փրիշթինէի մէջ, 11ին Թաշլըճայի, Սէնիճէի, Ագվայի եւ Փրէզրինի մէջ եւ 12ին ու 13ին Շքօտրայի մէջ երկրաշարժի ցնցումներ զգացուած են : Բարեբախտաբար կեանքի կօրուստ չկայ : — Սէլանիկի մէջ ելեկտրական լոյս եւ ելեկտրաշարժ թրամուէյ հաստատելու մենաշնորհը, որ Յրանսական ընկերութեան մը փոխանցուած էր, այս անգամ Սէլանիկի նաւահանազրատին շահագործման ընկերութեան փոխանցուեցաւ : — Պիթլիսի կուսակալը քննական պատյտի մը երաժ է ինչ ինչ տեղեր կառուցանելի զինուորական պահականոցներու եւ ոստիկան զինուորութեան յատուկ գործողութիւններու վերաբերեալ ռուսաց մասիրութիւններ ընելու համար : — Էտիրնէի մէջ ցուցահանդէս մը պիտի կազմակերպուի նահանգին երկրագործական եւ ճարտարուեստական արտադրութիւններուն համար :

Այլ-այլ. Կառավարական պաշտօնատուներէ, պատրիարքարաններէն, Օսմ. Կայս. Պանքայէն, Հանրային Պարտքի Վարչութեանէն եւ այլ այսպիսի պաշտօնական հաստատութիւններէ տրուած գրութիւններու մասին հետապնդումներ ընելու համար Հիճազի երկաթուղիին ի նպաստ հաստատուած արժէքաւոր «Նիւմէրօ» պիտի չտրուի, այլ պարզ «Նիւմէրօ» Արժէքաւոր «Նիւմէրօ»ներու հաստատումէն առաջ տրուած պարզ «Նիւմէրօ»ներն ալ պիտի չփոխուին : — Չեռնհաս իշխանութեան պատուիրուած է ծրագիր մը պատրաստել Թուրքիոյ հանքային արտադրութիւնները օտար մրցումներու դէմ պաշտպանելու եւ այդ նպատակով հարկ եղած դիւրութիւնները ընծայելու համար : — Պէրութի Ամերիկեան Բժշկական վարժարանին տարեկան քննութեան ներկայ գտնուելու պաշտօն ունեցող Օսմ. քննիչ յանձնաժողովը Պէրութ ուղեւորեցաւ : — Գահիրէի հեռագրաթելերը գետնին տակէն անցընելու փորձ պիտի կատարուի եւ, եթէ փորձը յաջողի, Եգիպտական բոլոր հեռագրաթելերն ալ գետնին տակէն պիտի անցուին : — Պերզամայի մէկ գիւղին մէջ երեւան հանուած է Հերայի (Արամազդայ կին եւ ամուսնութեան զիցուհի) գեղեցիկ մէկ արձանը մէկ մեթր բարձրութեամբ, եւ իզմիր զրկուած է Կայս. Թանգարան փոխադրուելու համար : — Հայտարարւած է մէջ շինելի նոր կայարանին յատակաձեւերը վաւերացուեցան : Շինութեան ոճը Արարական պիտի ըլլայ : — Իզմիր-Գասապայի երկաթուղիին 1904ի ընդհանուր շահագործումը եղած է 5,845,843 ֆրանք, ծախքը 2,697,649 : Իւրաքանչիւր արժեթղթի 25 ֆրանք շահաբաժին որոշուած է : — Ուղեւորներու եւ

ապրանքի փոխադրութեան համար Պաղտատի եւ Դամասկոսի միջեւ կառքերու երթեւեկ մը հաստատելու ծրագիր կ'ուսումնասիրուի ձեռնհաս պաշտօնատան մէջ : — Աղեքսանդրիայէ ժամանողները բժշկական քննութեան եւ հականերման կ'ենթարկուին :

Մեր համբարդու-իւնը . Յունիս Չին Նիկոնէ մեկնեցանք եւ յաջորդ օրը Գոնես հասանք : Կիրակի երեք անգամ եւ երկուշաբթի եւ երեքշաբթի իրիկունները քարոզեցինք հոն : Պարտեզանք քաղաքին շահեկան վայրերը : Տեղւոյս Խատայէ վարժարանը , որ 10-12 տարի առաջ հիմնուած է կառավարութեան կողմէ եւ անցեալ տարի շատ ընդարձակուեցաւ , փառաւոր հաստատութիւն է : Ունի իբր 70 գիշերօթիկ աշակերտ : Ունի նաեւ փոքրիկ թանգարան մը : Յունիս Տին Ազէնիք գաղինք , Յին Գարահիսար : Տեղւոյս Աւետ . ժողովուրդը Պուրաուրի եկեղեցիին մաս կը կազմէ , եւ Վեր . Յակոբ Երանեան 15 տարիէ ի վեր հոս կը պաշտօնավարէ հաւատարմութեամբ : Այս կողմերու առաջնորդն է Տ. Մկրտիչ Վրդ . Աղաւնունի , որու հետ տեսակցեցանք : Տ. Եղիշէ Վրդ . ալ անոր քով կը գտնուէր հիւրաբար : Կիրակի երեք անգամ քարոզեցինք իբր 100 հոգիի : Յունիս 12ին Էսկիշէիք եկանք , 13ին Էնկիւրիւ ուղեւորեցանք : Մալիքէօյի եւ Սինճանքէօյի միջեւ ճամբան աւրուած էր սաստիկ փոթորկի մը յարուցած հեղեղներէն : Այդ պատճառով կառախուսքը օր մը ճամբան մնաց . Երկաթուղիին աւերուած մասը 800 մետր էր , դաշտին մէջ գտնուող 5-6 հարիւր ոչխար եւ այժմ հեղեղներէն քչուեցան : Ծերունի հօտարած մը եւս քչուեցաւ , բայց ազատուեցաւ : Չորեքշաբթի Էնկիւրիւ հասանք , հինգշաբթի Սթանոզ , իսկ ուրբաթ Էնկիւրիւ վերադարձանք : Կիրակի հոն մնացինք եւ երեքշաբթի Պիլէճիկ եկանք : Չորեքշաբթի Կ. պոլիս ժամանեցինք : Մեր ճամբորդութիւնը 38 օր տևեց :

Բողոք . Ժող . Անցեալ հինգշաբթի Կէտիկփաշայի Ամերիկեան վարժարանին ամալերջի հանգէսը տեղի ունեցաւ եւ 3 Հայ եւ 1 Յոյն շրջանաւարտի վկայական առին : — Պէյրութ Գոլէճի վերջին յայտագրէն կը տեսնուի թէ այս տարի այդ հաստատութեան նախակրթական , ուսումնական , առեւտրական , ղեղազորական եւ բժշկական բոլոր ճիւղերու ուսանողներուն համագումարը 750ի հասած է :

Հայ Լուս . Ժող . Երեք անձնաւորութիւններ յանձն առած են հոգալ Ազգ . Հիւանդանոցի երրորդ թեւին շինութեան ծախքը : Անոնց անունները պիտի ար-

ձանագրուին իրենց շինած մասերուն վրայ : Չորրորդ անձ մը , որ մատրան շինութիւնն ստանձնած է , իր անունը պիտի արձանագրէ անոր ճակատը : — Իզմիրի առաջնորդ Տ. Եղիշէ Եպսկ . Դուրեան անցեալ օրբաթ մայրաքաղաքս ժամանեց : Կ'ըսուի թէ ի մօտոյ իր ձեռնադրութեան քսանեւհինգամեակը պիտի տօնուի Արմաշի դպրեւանքին մէջ : — Երեքշաբթի Վսեմ . Կարապետ Եզեանցի հոգիին համար հանգստեան կարգ կատարուեցաւ Բերայի Սբ . Երրորդութիւն եկեղեցիին մէջ եւ Պատրիարք Հայրը դրուատական քարոզ մը խօսեցաւ հանգուցեալին վրայ : — Ռուսիոյ Ներքին գործերու նախարարութիւնը Կովկասի փոխարքային զեկուցած է թէ Չարը ջնջած է Փլէվէի առաջարկով հաստատուած 1903 Դեկ . 23ի օրէնքը , եւ թէ հետեւագլէս դպրոցական եւ կառուածական խնդիրներու , եւս . պատճառով Կովկասէ վտարուած Հայ եկեղեցականները ազատ արձակուած են : — Սահահանդէլ լրագիրը երեքշաբթի անպայման դադարման դատապարտուեցաւ :

Յոյն Ժող . Ռուս Սինոզը , պատասխանելով Եսոքիմ պատրիարքին որ շրջաբերականով մը հարցումներ քրած էր կարգ մը ծէսերու եւ վարդապետութիւններու վրայ , կը հաւանի որ եկեղեցիներու ներկայացուցիչներ զուամարում մը ունենան յարուցուած խնդիրներուն վրայ վիճաբանելու համար : — Թարապիացի Տիկին Ա. վրամովիչ , որ վերջերս Աթէնքի մէջ մեռաւ , 45.000 տրախմ կտակած է բարենպասակ հաստատութիւններու : — Եգիպտոսակ վաճառականներէն Նէսթոր Յանազը 2,500 ոսկի նուերած է Էպիֆանի նահանգին մէջ քաղաքին մէջ վարժարանի մը կառուցման համար : Առեւտրական հրատարակ . Յունիս 17 (Ն . Տ .) 0 . Ո . 100

Տարն , Անատուլու կրծք .	կր 78 դահ .	Անգղիական քաղք 36½-37 փր .	ընտիր , 40-41 :	111 , Բիզոն 42½ ֆրանք :
Ալեք . Էսքիշէիք գործաւ , պարկր 75 դահ .	Սեւ ծով 145-165 :	Օտեսա (Ա) 93-96 , (Բ) 88-92 , (Գ) 80-83 :	Սեւ . Անատուլու քաղք 41 փր . :	Սեւ . Անատուլու քաղք 41 փր . :
Բուրլու , Ռուս . Պոյոյ համար զոյգ թիթեղ 27½ :	Սեւ . Անատուլու քաղք 41 փր . :	Շոփուք , Թրիէսթէ կենդինարը 103 դահ . , Ռուսական 93 :	Թէֆլիկ , Էնկիւրի-Նոզ դատ քաղք 18-19 դահ . :	Բուրլու , Անատուլու քաղք մա քաղք 7½-7½ դահ . :
Սուրճ , 100 քաղք 6½-6¾ Բրնչ . Եգիպտոսի , պար .	Սեւ . Անատուլու քաղք 41 փր . :	Գրամուլու .	Ալիշու , Գարահիսար , Պատրիարք 120-122 :	Բուրլու 9/22
Օսմ . Միաց . Օ . Ո . 96 8	Ռուս . Երկթղ . ֆր . 131 50	Մէճիտիյէ 108 3	Նաբոլէոն 87 14	
Մէթալիք 103 20	Գրիմից 51 03	Մանր արծաթ 104 10	Անգլ . ոսկի 109 35	
Ռուսիոյ բոլ 90	Մանէթ 8 64			

ԱՐՏԱՔԻՆ

Հարգանքներն Բանակցութիւններ. Նախագահ Բողե-
վէթ Ռուս եւ Ճափոնական կառավարութիւններու
նուառն ուղղութեամբ իր գրութիւններուն մէջ, որոնք
Յունիս Տին յանձնուեցան, կ'ըսէ. «Նախագահին
զգացումն այն է թէ հասած է ժամը, երբ ինք ամ-
բող մարդկութեան շահուն համար նայելու է թէ
արեօք հնար չէ՝ վերջ տալ այս ահաւոր եւ ող-
բալի պայքարին: Միաց. Նահանգները թէ՛ Ճափո-
նի, թէ՛ Ռուսիոյ կապուած են բարեկամութեան
եւ բարեացակամութեան կապերով եւ կ'զգան թէ
աշխարհի յառաջիկութիւնը կը խափանուի երկու
մեծ տէրութիւններուն սոյն պատերազմով: Նա-
խագահը Ռուս եւ Ճափոնական կառավարութիւն-
ները կը յորդորէ ոչ միայն իրենց համար, այլեւ
բովանդակ աշխարհի շահուն համար, հաշտութեան
բանակցութեան ձեռնարկելու ուղղակի իրարու հետ»
Իրութեան մնացեալ մասին մէջ Նախագահը կը
թելադրէ միջնորդ չգործածել, եւ ինք կը խոս-
տանայ, եթէ ուզուի, իրենց օգնել որ բանակցու-
թեան համար գումարման ժամանակը եւ տեղը
որոշեն: Ռուսիա ալ, Ճափոն ալ, ընդունեցան
այս առաջարկը եւ Ճափոնական ծանուցագիրը հե-
տեւեալը կը պարունակէ. «Եղայս. կառավարութիւ-
նը, ինչպէս Ճափոնի նոյնպէս եւ աշխարհի շա-
հուն համար փափաքելով խաղաղութիւնը վերա-
հաստատել Ռուսիոյ հետ այնպիսի պայմաններով
որոնք լիովին երաշխաւորեն անոր ամբողջութիւնը,
Նախագահ Բողեվէթի թելադրութեան համաձայն
լիազոր ներկայացուցիչներ պիտի անուանէ Ճափո-
նի համար, որպէս զի Ռուսիոյ լիազոր ներկայա-
ցուցիչներուն հետ գումարին այնպիսի ժամանակ
եւ տեղ մը, որոնք փոխադարձաբար հաճելի եւ
յարմար դատուին երկու պատերազմիկներուն մի-
ջեւ ուղղակի բանակցելու եւ հաշտութեան պայ-
մանները կնքելու նպատակով» Յունիս 15ին
Նախագահ Բողեվէթի քարտուղարը հետեւեալն
հրատարակեց. «Երբ Ճափոնական եւ Ռուսական
կառավարութիւնները չկրցան հաւանիլ որ Զիֆու-
կամ Փարիզ ըլլայ հաշտութեան լիազոր բանագնաց-
ներուն գումարման վայրը, Նախագահն առաջար-
կեց զԼահէ: Բայց երկու տէրութիւնները մէկտեղ
դարձեալ առարկութիւն յարուցին, եւ Ուաշինկ-
թըն քաղաքն առաջարկեցին: Ուստի Նախագահը
պաշտօնապէս ծանոյց երկու կառավարութիւննե-
րուն թէ Ուաշինկթըն պիտի ընտրուի» Սակայն
Սիւնթուրի Սբ. Փեթըրսպոլսկի թղթակիցը կ'ըսէ
թէ Ռուսիոյ մայրաքաղաքին մէջ չընդունուի թէ

Ուաշինկթըն ընտրուած է իրրեւ վայր գումար-
ման, եւ թէ կը կարծուի որ Լահէ պիտի ըլլայ
ընտրելի վայրը: Կ'ըսուի, թէ եւ ոչ պաշտօնապէս,
թէ Փարիզի Ռուս դեսպան Մ. Նէլիտով պիտի ըլ-
լայ Ռուսական լիազորը եւ Մարքիզ Իթօ Ճափո-
նական լիազորը: Հեռագիրներէ տմանց համաձայն
Սեպեմբերին տեղի պիտի ունենան բանակցու-
թիւնները: Բայց ուրիշներ կը կարծեն թէ, եթէ
երբեք բանակցութիւններ տեղի պիտի ունենան,
գումարման համար կարգադրութիւններ պիտի ըլ-
լան շուտով, երբ դժուարութեան մէկ կէտը լուծ-
ուի: Այդ կէտը սա է. Ռուսիա լիազոր ներկայա-
ցուցիչներուն գումարումէն առաջ կ'անձկայ բա-
նակցութեան հիմ մը ապահովել, զի մի գուցէ
Ճափոնական անակնկալ պահանջում մը անկարելի
դարձնէ բանակցութիւններուն շարունակումը:
Ճափոն իր կողմէ կը յայտարարէ թէ որոշած է
կանխաւ ոչ մէկ տեղեկութիւն տալ իր պայման-
ներուն վրայ: Այս դժուարութիւնը կրնայ դեռ
ամբողջեան մասնել հաշտութեան ամբողջ ձեռ-
նարկը: Միաց. Նահանգները, Ֆրանսա եւ Գեր-
մանիա, ամէնքը Ճափոնի յորդոր կը կարգան՝ որ-
չափ կարելի է՝ չափաւորել իր պահանջումները:
Մեծ Բրիտանիա իրրեւ Ճափոնի զինակից այդ մա-
սին կը մերժէ միւս տէրութիւններուն միանալ,
որպէս զի չթուի թէ կը ջանայ զՃափոն կապտել
յաղթութեան օրինաւոր պատուներէն:

Պարտաւոր. Մով. Թոկոսի տեղեկագրէն կը տես-
նուի թէ Յուշիմայի նաւամարտին մէջ Ճափոնցի-
ները մեծ օգուտ քաղեցին իրենց նաւերուն սրն-
թացութեան առաւելութենէն: Մով. Թոկոս, երբ
միանգամ ստուգեց թէ թշնամին ինչ ուղղութեան
կը հետեւի, փութաց անոնցմէ առաջ անցնիլ, եւ
երբ անոնց ճամբան կտրելու չափ առաջ անցաւ,
անոնց կողմը դարձաւ: Սրնթացութեան առաւե-
լութենէն զատ նաւամարտին ելքը որոշող տար-
րերն եղան Ճափոնական նաւերուն ճիշտ նշանա-
տութիւնը եւ համախուժը գործողութիւնը: Ճա-
կատամարտին մէկ մասը մէկ օրուան, մէկ մասը
յաջորդ օրուան մէջ տեղի ունեցաւ: Բայց ելքը,
Ճափոնական առաջին թնդանօթին արձակումէն
հաշուելով, 40 վայրկեանէն վճռուեցաւ: Ռուսա-
կան լաւագոյն մարտանաւերուն երեքը ընկղմեցան
լոկ թնդանօթահարութեամբ: Երբ նաւ մը գործելու
անկարող փիճակի մէջ կ'իյնար, Մով. Թոկոս այն
ատեն միայն կ'արձակէր իր ծովաւճարակիրները
յաճանաւերու կրակին պաշտպանութեան տակ,
որպէս զի վերջնական հարուածը տային: Կը կար-
ծուի թէ Ալեքսանդր Գ մարտանաւին բոլոր նաւագ-

ները կորսուած են, իսկ Պարսիքի եւ Նախապետական նախագահներուն միայն երկուքը ազատուած են : Ծով էնքուրսթ, որ Պարսիկեան նախապետին հրամանատարներուն երրորդն էր, Անգղիոյ մէջ Ծով Թոկոսի աչակերտակից եղած է : Ոմանց կարծիքով Ծով Թոկոս դիտմամբ թոյլ տուաւ անոր Մանիլա փախչիլ : Ռուս յաճանաւեր Անգղիական շոգենաւ մը եւ Գերմանական շոգենաւ մը ընկզմած են, թէեւ կ'ըսուի թէ ասոնց ոչ մին պատերազմի արգելեալ նիւթ կը կրէր : Ար. Փեթրոսպուրկի Անգղիական ղեսպանը Լամատորվ կոմսին ուշադրութեան պիտի ներկայէ այս խնդիրը : Զարին հորեղբայր Ալեքսիս մեծ դուքսը Ծովապետի պաշտօնէն հրաժարեցաւ : Հրաժարեցաւ նմանապէս Ծովային նախարար Ծով Ավելյան : Նշան չկայ թէ զինադուլ պիտի հրատարակուի : Մարաշխաւ Օյամայի ալ յառաջխաղացումն արդէն իսկ սկսած է : Ընդհարման ելքին նկատմամբ հակասական են լուրերը : Թաքթէ կը հեռագրուի պաշտօնապէս թէ յարձակումը ամսոյս 6ին սկսաւ եւ թէ օսաստիկ կռուէ մը ետեւ ճափոնցիները վանեցին Ռուսերը այն դիրքերէն զորոնք բռնած էին Լիսոնսոնափնիկի մօտ, եւ գրաւեցին զանոնք : ճափոնցիներուն կորուստն է 30 մեռեալ, 33 վիրաւոր, Ռուսերունը աւելի մեծ : Ռուսական ոչ-պաշտօնական հեռագրի մը համաձայն Ռուսերը 17ին վերստին գրաւեցին զԼիսոնսոնափնիկ : Ըստ Սապահի, ճափոնցիները քանի մը մանր յաջողութիւններէ ետեւ հասան վայր մը, որ Քիրինէ 60 հազարամետր հեռի է : Անձրեւները սովորական ժամանակէն առաջ սկսած են, եւ զինուորական գործողութիւններու արգելք կ'ըլլան : Սլանուրի կ'ըսէ թէ ճակատամարտին ելքին վրայ տարակուսիլ գրեթէ կարելի չէ : Կը հաշուէ Ռուսերու թիւը 300.000 եւ առ առաւելն 360.000, իսկ ճափոնցիներունը գրեթէ ատոր կրկնապատիկը : Փարիզի զիւանագիտական շրջանակներուն մէջ ստոյգ չգիտցուի թէ ճափոնցիները իրենց յարձակողական շարժումը յառաջ պիտի վարեն թէ լակ կ'աշխատին նպաստաւոր դիրքեր գրաւել հաշտութեան բանակցութիւններուն սկսելէն առաջ :

Այլույ՛ք : Անցեալ հինգշաբթի Ռեինսարբի մէջ տեղի ունեցաւ Շուէտի գահաժառանգին երիցագոյն օրդի Կիւսթիպ Ատոյֆոս իշխանին ամուսնութիւնը Գոնսթի քաջին զուտար Մարկարէթ իշխանուհիին հետ : Պակագիրն եղաւ Բէնթրըզրիի արքեպիսկոպոսը : Էսուրրա թագաւորը Անգղիական նախապետին պատուակալ ծովակալ անուանեց Օսքար թագաւորը եւ Զանկապանի պատուանշանը տուաւ Շուէտի գահաժառանգ իշխանին : Օսքար թագաւորը փոխադարձաբար Շուէտական նախա-

աորմի պատուակալ ծովակալ անուանեց Էսուրրա թագաւորը : Նորվեկեան ազգին անուամբ եւ վարչապետին ու խորհրդարանի նախագահին օտորագրութեամբ շնորհակալութիւններ զրկուեցան թէ նորապսակ ամուսին, թէ՛ Օսքար թագաւորին : — Ըստ Յունաստանի Երկիրու թագաւորին հրամանագրին, պետական գանձուն կողմէ հոգացուեցան հանգուցեալ վարչապետ Մ. Տէլեանի թաղման ծախքերը : Երեւոյի Ժողովը, նկատելով որ աղքատ մեռաւ ան, տարեթոշակ պիտի քուէարկէ անոր երկու քեռաղջիկներուն որոնք անոր հետ կը բնակէին : Մ. Տէլեանի ծնաւ 1826ին : Պերլինի վեհաժողովին ներկայ եղաւ իրբեւ ներկայացուցիչ Յունաստանի, եւ այն ժամանակէն սկսեալ Յունաստանի առաջնակարգ պետական անձնաւորութիւններէն մին եղաւ : Նախ վարչապետ եղաւ 1883ին իր Գուժուտորոս բարեկամին մահէն ետքը, եւ ինք ու Թրիքուսի փոփոխակի վարեցին կառավարութիւնը մինչեւ որ վերջինը քաշուեցաւ քաղաքական կեանքէ եւ քիչ յետոյ մեռաւ 1896ին : Բանի մը տարի առաջ Մ. Տէլեանի վարչապետ անուանուեցաւ հինգերորդ անգամ : — Կայօրը Հունգարական առժամեայ նախարարութիւն մը անուանեց Պառոն Ֆէյերվարիի վարչապետութեամբ : Կը կարծուի թէ նորակազմ նախարարութիւնը ցուրտ ընդունելութիւն պիտի գտնէ Երեւոյի Ժողովէն : — Ռուսիոյ էքսթրէրիստալաւ նախնազէն կը ծանուցուի հանքային ծանր պայթում մը, որու զոհ դացած են 500 անձեր : — Պարսից Շահը կիրակի Վիէննա ժամանեց : — Մ. Ռուզիէ որոշեց պահել Արտաքին գործերու նախարարի պաշտօնը, եւ Մ. Մէրլու Ելեւստական նախարար անուանուեցաւ : — Սլանուրի Սր. Փեթրոսպուրկի թղթակիցը կը հեռագրէ թէ Ռուս կառավարութիւնը Լահէի նախապատուութիւն ընծայելէ ետ կեցած է եւ Ռուս չինկթըն պիտի ըլլայ հաշտութեան բանակցութեան լիազօր ներկայացուցիչներուն գումարման վայրը : Ռուս չինկթընի ճափոնական ղեսպանը նախագահ Բոզէվէլի իմացուց թէ ճափոնական լիազօրները Օգոս. 1ին պիտի ժամանեն Ռուս չինկթըն եւ թէ բանակցութիւնները կրնան անմիջապէս սկսիլ : Եթէ Ռուսիա պատրաստ է, Թաքթէ կը հեռագրուի թէ երեքշաբթի հաշտութեան պայմանները որոշելու համար մեծ խորհուրդ մը գումարեցաւ հոն պետական թուր երեւելի անձնաւորութիւններուն եւ շատ զօրավարներու ներկայութեամբ : — Մանչուրեան նորագոյն լուրերէն կ'երեւի թէ Ռուսերը կը նահանջեն պաշարումէ խոյս տալու համար : Սապահի Լոնտոնեան հեռագիրներուն համաձայն ասոնք սկսած են պարզել զՔիրին : Օմագօ, որ Քիրինէ 60-70 մղոն հեռու է դէպ արեւելք, նախ գրաւուեցաւ ճափոնցի հեծելազօրքերէն եւ հիմա կ'ամրացուի անոնց ձեռամբ :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
 Ի ՏԵՐԱՆԻ Ա. ՔԱՅԱ ՉՕՏԱԿԱՆ
 Ֆինանսնըյար Եօգուշու Ամրիքան խան